

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԳՈՒՄԱՐՈՒԷՅԱԼ 7-8-9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

«Չայ եկեղեցւոյ վերանորոգումը, մարդուծի պատրաստութիւնը, արժեքներու վերաշեշտումը, Սփիւռքի վերակազմակերպումը, Լիբանանի եւ Սուրիոյ գաղութներու զօրակցութիւնը, Չայաստանի եւ Արցախի հզօրացման մասնակցութիւնը պէտք է մնան առաջնահերթութիւն»

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Չորեքշաբթի, 7 Դեկտեմբեր 2022-ի ժամը 09:00-ին, Անթիլիասի մայրավանքի վեհարանին մէջ, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Չայրապետը պաշտօնական բացումը կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին: Չորս տարին անգամ մը գումարուող Ազգային Ընդհանուր Ժողովին մասնակցեցան թեմակալ առաջնորդներ եւ թեմերու պատգամաւորներ, շուրջ 125 երկսեռ անձեր:

Շար.՝ 19 5 >

ԲԱՆԱՋԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Նորին Սուրբ Օծուին Տէր Տէր Արամ Ա. Կաթողիկոսի բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ գումարուած Ազգային Ընդհանուր Ժողովը




եռօրեայ բեղուն գործունեութեամբ անարտին հասաւ, եզրափակելով Կիլիկեան Սուրբ Աթոռի բազմերես ծառայութեան ճամբով վերաթեւորման ելքարկելով իր իրականացուցած գործունեութիւնը եւ կատարած իրագործումները:

Ազգային Ընդհանուր Ժողով

Շար.՝ 19 4 >

ԹԵՄԵՐԸ ԱՌԱՆՋՆԱԲԱՐ ՀԱՆԴԴՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՅԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇԵՏ

Նախագահութեամբ Սուրբ Աթոռոյս Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Չայրապետին, Կաթողիկոսանիստ Մայրավանքին մէջ, 7-9 Դեկ-



տեմբեր 2022-ին, կայացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը, որ Կաթողիկոսութեանս բարձրագոյն ժողովն է

Շար.՝ 19 2 >

ՀԱՐԻՐԱԽՐ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԷՅԱԼ ՀՅԴ-Ի 132-ԱՄԵԱԿՅ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Յակոբ Բագրատունի. «Մենք Կը խոստանանք Մնալ Արի Ու Խիզախ: Յուսահատութիւնը Տեղ Չունի Մեր Հոգիներուն Մէջ: Մենք Հաւաքաբար Պիտի Յաղթենք Դաշնակցութեան Ոճով, Ոչ Թէ "Յաղթելու Ենք"»-ի խարկանքով:



Չայ Յեղափոխական Դաշնակցութեան 132-ամեակը Հալէպի մէջ առիթ հանդիսացաւ ժողովուրդէն ծնած ու ժողովուրդին վստահութեան արժանացած կազմակերպութեան պատմութեան եւ ներկայ մարտահրաւերներու պարզաբանման:



Արդարեւ, հալէպահայութիւնը իր տարբեր միութիւններով, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներով, ՀՅԴ-ի անդամներով ու համակիրներով համախմբուած էր ոչ միայն յիշատակելու ՀՅԴ-ի յորբէտանը, այլեւ այս առիթով կազմակերպութեան խօսքը լսելու աշխարհաքաղաքական եւ հայկական դժուարութիւններով եւ վտանգներով բնորոշուող ներկայ ժամանակներուն մէջ:

ՀՅԴ 132-ամեակի յիշատակումը տեղի ունեցաւ Կիրակի, 11 Դեկտեմբեր 2022-ի երեկոյեան, Հալէպի «Գ. Եսայեան» սրահէն ներս, հովանաւորութեամբ Բերիոյ Չայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ ՀԵ Միութեան:

Չանդիսութեան ներկայ էին հայ երկու համայնքապետներն ու անտարանական համայնքի ներկայացուցիչը, ՀՀ Հալէպի հիւպատոսն ու հիւպատոսութեան օգնականը, ՀՀ Սուրիոյ մէջ մարդասիրական խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչը, Լիբանանի խորհրդարանի անդամ, Լիբանանի ՀՅԴ Կ.Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, Սուրիոյ երեսփոխանի հայագի ներկայացուցիչը, հայկական կազմակերպութիւններու, միութիւններու եւ հաստատութիւններու, ազգ. մարմիններու, քահանայից դասու ներկայացուցիչներ, ՀՅԴ անդամներ, համակիրներ ու նահատակ հա-

Վեհան Դարսումեան

Շար.՝ 19 12 >

ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՆԱԲՈՅՐ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. ՏԵՐ ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆԻ

Շաբաթ, 10 Դեկտեմբեր 2022-ին, Բերիոյ Չայոց Թեմի նորընտիր Առաջ-



նորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Բերիոյ Չայոց Թեմի պատգամաւորներուն հետ Լիբանանի մէջ գումարուած Ազգ. Ընդհանուր Ժողովէն վերադարձին, թեմի Գործադիր Իշխանութեան՝ Ազգ. Կրօնական Ժողովին եւ Ազգ. Վարչութեան

Շար.՝ 19 6 >

Խմբագրական

ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱԶՈՒՄԸ՝ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՊԱՐԱՆՁ

Խորհրդային Միության փլուզումով, արցախահայությունը ազատագրական պայքարով եւ հանրաքուեով հաստատեց ԽՍՀՄ-էն անջատուելու եւ ազատ ապրելու իր որոշումը: Այս որոշումը շրջեց արցախահայության կեանքը: Ատրպեյճանի 70 տարիներու պարտադրած ծանր պայմանները, բռնարարքները, ցեղասպանութեան շարունակուող փորձերը ընկճած էին Արցախի բնիկ ժողովուրդը: Ան չունէր բարգաւաճելու, իր հայկականութիւնը պահելու եւ Հայաստանին, աշխարհին ու համայն հայութեան հետ կապուելու իրաւունք ու կարելիութիւն:

Ազգային ինքնորոշման միջազգայնօրէն հաստատուած իրաւունքի կիրարկումէն ետք, Արցախի ժողովուրդը նոր էջ բացաւ իր պատմութեան մէջ: Այդ էջը եղաւ բարգաւաճումի, անկախ պետականութեան հաստատման, ազատ ապրելու եւ բնիկ ժողովուրդի ինքնութեան պահպանման մեկնակետը:

Անկախութեան ձեռքբերումով վերացան նաեւ Արցախի բնակչութիւնը Ցեղասպանութեան ենթարկելու փորձերը:

Ազատ Արցախը ոչ մէկ դրացի երկրի վտանգ կը ներկայացնէր: Ան պարզապէս ազատօրէն իրեն արժանի տեղը կը վայելէր տարածաշրջանին մէջ:

44-օրեայ պատերազմէն ետք, սակայն, Ատրպեյճան փորձեց ու կը փորձէ կուլ տալ Արցախը, կրկին շրջափակել անոր բնակչութիւնն ու նախքան անկախութեան տարիներու վտանգալից օրերուն վերադարձնել զայն՝ անտեսելով Արցախի բնակչութեան բոլոր իրաւունքները եւ փորձելով վերջնականապէս խզել անոր կապը Հայաստանի ու աշխարհի հետ ընդհանրապէս՝ շարունակելու 30 տարի առաջ կիսատ մնացած Արցախի հայերու ցեղային մաքրագործումը:

Լաչինի միջանցքին փակումը, Արցախի տեղեկատուական շտապին հաստատմամբ Ատրպեյճանի կողմէ Արցախի կազմատակարարման դադրեցումը, ու այս բոլորին կողքին 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան պայմաններուն բացայայտ խախտումը կը վկայեն, որ Արցախի բնակչութիւնը կը փրկուի միայն իր անկախութեան ամրագրումով ու այդ անկախութեան միջազգային ճանաչումով:

Ատրպեյճան զինաթափ ընելով Արցախը, խզելով անոր կապը արտաքին աշխարհի հետ ընդհանրապէս, կը ծրագրէ նոր բռնարարքներու:

Հայկական կողմը՝ Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր կարելիութիւններով, փաստացի հիմքեր ունի Արցախի բնակչութեան ինքնորոշման իրաւունքը լուսարձակի տակ պահելով Արցախի միջազգային անյապաղ ճանաչումը պահանջելու ու Արցախի բնակչութիւնը մարդկային աղետէ փրկելու:

Ո՛չ կոչերն ու ցոյցերը, ոչ ալ դիտորդական առաքելութիւններն ու խաղաղապահ ուժերը պիտի կարենան ապահովել Արցախի բնակչութեան կեանքն ու կասեցնել Ատրպեյճանի ծրագրուած բռնարարքներն ու առաւելապաշտական նկրտումները:

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի յայտարարութիւնը՝ Արցախի ժողովուրդին սպառնացող մարդասիրական աղէտը կանխելու մասին, ահագանգ մըն է ուղղուած Հայաստանի ու համայն հայութեան՝ գործի լծուելու եւ Արցախի միջազգային ճանաչման համար պետական, դիւանագիտական, յարաբերական, քարոզչական բոլոր լծակները օգտագործելու եւ կասեցնելու Արցախի դէմ Ատրպեյճանի սադրանքները:

Հայ նահատակները, հերոսները իրենց կեանքը նուիրեցին այս նպատակին համար: Արցախը պահելու համար պայքար պէտք է մղել ամէն ճակատներու վրայ, ոչ թէ յանձնուիլ խաղաղութեան պատրանքներուն:

«Գ.»

-Սուրիական կեդրոնական դրամատունը հերքեց յառաջիկայ ամիսներուն կառավարական պաշտօնեաներու ամսականներուն վճարումը ուշացնելու հաւանականութեան շուրջ եղած տարածաշրջանը, հաստատելով, որ կառավարութիւնը տարիներու բաւարար կանխիկ գումարներ ապահոված է, ինչպէս նաեւ ունի արտարժոյթի բաւարար պահեստ:



-Երկրորդ օրն ըլլալով, Դամասկոսի Ոսկերիչներու Միութիւնը յայտարարեց, որ սուրիական շուկային մէջ ոսկին գինը կայուն մնաց: Միութեան ցուցակին համաձայն, ոսկիի, 21 կարատի, 1 կրամին գինը դարձաւ 285.000 ս.ո., մինչդէռ 18 կարատի մէկ կրամը՝ 244.000 ս.ո.:



-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ «Սուրիա Դրկուած Մահացու Չէնքերու Հետաքննիչ Յանձնախումբ»-ին հրապարակած գեկոյցը՝ հոլանտական կառավարութեան Սուրիոյ մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն մահացու գէնքեր տրամադրելուն շուրջ, կը հաստատէ հոլանտական պետութեան օրինական, բարոյական եւ քաղաքական գայթակղութիւնը:



Յանձնախումբը հաստատեց, որ հոլանտական կառավարութիւնը նման ընթացքով հակասած է միջազգային օրէնքին, շեշտելով, որ «Հոլանտայի հանրութիւնը ապատեղեկատուութեան զոհ է, որովհետեւ կը կարծէ թէ Սուրիա օժանդակութիւն առաքուած է իր պետութեան կողմէ»:

- Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ Սուրիոյ Հանրապետութիւնը խստիւ կը դատապարտէ սուրիական հողերու վրայ ԱՄՆ ուժերուն եւ անոնց ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն ոտնձգութիւնները:



Նախարարութիւնը կոչ ուղղեց ՄԱԿ-ին վերջ տալու ԱՄՆ-ի եւ անոր դաշնակիցներու ոտնձգութիւններուն, ինչպէս նաեւ կոչ ուղղելու ԱՄՆ-ին, որ իր ուժերը դուրս բերէ սուրիական տարածքներէն եւ սուրիական պետութեան վերադարձնէ իր բռնագրաւած քարիւղային հորերը:

ԹԵՄԵՐԸ ԱՌԱՆՁՆԱԲԱՐ...

Սկիզբ՝ էջ 1

Եւ կը գումարուի չորս տարին անգամ մը: Երեք օրերու վրայ տարածուած ժողովական աշխատանքներէն ետք, 9 եւ 10 Դեկտեմբերին, Վեհափառ Հայրապետը հերթական առանձին հանդիպումներ ունեցաւ թեմերուն հետ՝ ներկայութեամբ թեմակալ առաջնորդին եւ պատգամաւորներուն: Այս հանդիպումներու ընթացքին քննարկուեցան թեմերուն առկա աշխատանքային ծրագիրները:

Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Աջգարեանի կողքին, Ազգ. Կ. Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեանն ու թեմի հետեւեալ պատգամաւորները մասնակցեցան Ազգ. Ընդհ. ժողովին եւ հանդիպումին:

- Վրէժ Եագուպեան
- Մէթր Սունայուլ Սունայուլեան
- Յարութիւն Հայրապետեան
- Դոկտ. Հուրի Ազեգեան
- Աւօ Կարպուշեան
- Նշան Լնդեան
- Խաչիկ Մելքոնեան
- Հայկազ Ասատուրեան
- Ժիրայր Ռէիսեան
- Յովսէփ Գասապեան:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԹԵՂԵՎՆԵՎԵՆՑԱԿ

11 Դեկտեմբերին Լիբանանէն Թեհրան ժամանած է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան:

Տեր Խաչատուրեան այս տարուան ՀՅԴ 132-ամեակի առթիւ որպէս բանախօս ելոյթ պիտի ունենայ կազմակերպուած հանդիսութեան: Մինչ այդ, սակայն, ըստ նախատեսուածին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը հանդիպումներ պիտի ունենայ համայնքի ազգային, ժողովրդական եւ մարզա-մշակութային կառոյցներու անդամներուն ու ներկայացուցիչներուն հետ:



Թեհրանեան այցելութենէն բացի, ան շաբաթավերջին երկօրեայ այցելութեամբ պիտի մեկնի Նոր Զուղա, ուր հիմնաւորաց համայնքի ազգային-հասարակական միաւորներուն ինչպէս նաեւ ժողովուրդին հետ անմիջական հանդիպումներ պիտի ունենայ:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՋ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ԼՂ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՔԱՎԱՆՈՒԹԻՒՆ ՈՐԴԵՔՐԱԾ Է՛»

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը Լազիսի միջանցքին մէջ ատրպէյճանական սադրանքին մասին հրապարակած է յայտարարութիւն մը, որ ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ.

«Լաչիսի միջանցքի արգելափակումը գործնական արտայայտումն է բազմաթիւ ահազանգերի, որ Ատրպէյճան Լեռնային Ղարաբաղի հայութեան նկատմամբ ցեղասպանութեան քաղաքականութիւն է որդեգրել: Ատրպէյճանական զինուած ուժերի կողմից ԼՂ շփման գծում հրադադարի ռեժիմի պարբերական խախտումներն ու սադրանքները ԼՂ հայութեան գոյաբանական վտանգը աւելի առարկայական են դարձնում:



Ընդգծում ենք, որ միջազգային պարտաւորութիւնների, այդ թւում նաեւ 2020-ի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնով ստանձնած յանձնարարութիւնների անշեղ կատարումը, ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից հրա-

Շար.՝ 12 6

ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արցախի խաղաղ բնակչութեան նկատմամբ ֆոսֆորային ռումբեր օգտագործած ատրպէյճանցիները բնապահպանական պատրուակով վերջին օրերուն երկրորդ անգամ արգելափակեցին Ստեփանակերտ-Գորիս կենցիկ ճանապարհը՝ 9-10 Նոյեմբերի եռակողմ համաձայնագիրով միջանցքի կարգավիճակ ստացած մայրուղին:



Խստորէն կը դատապարտենք Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան կողմէն կազմակերպուած սադրիչ գործողութիւնները, որոնք միտում են տարածաշրջանի մէջ իրավիճակի ապակայունացման:

Կը դիմենք Արցախի Հանրապետութեան քաղաքացիներուն՝ ցուցաբերել զըստապարտելի, ըլլալ զգօն, որպէսզի միասնական ջանքերով կանխենք ատրպէյճանցիներու որեւէ սադրիչ գործողութիւն: Իր գոյապայքարի ընթացքին բազում դժուարութիւններ յաղթահարած մեր ժողովուրդը այս անգամ պիտի դիմակայէ առկայ եւ ապագայ մարտահրաւերները:

Միջազգային հանրութեան կոչ կ'ուղղենք որոշակի քայլերով գործողութիւններ ձեռնարկելու՝ զսպելու Ատրպէյճանի յարձակողական նկրտումները:

Ռուս խաղաղապահները կը յորդորենք եռակողմ համաձայնագիրով աւելի կոշտ միջոցներով կանխելու ատրպէյճանցիներու նմանօրինակ հակամարդկային գործողութիւնները:

- «Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն» խմբակցութեան ղեկավար՝ Դ. Մելքումեան
- «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար՝ Ա. Մոսիեան
- «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար՝ Դ. Գալստեան
- «Միասնական Հայրենիք» խմբակցութեան ղեկավար՝ Մ. Պետրոսեան
- «Ազատ Հայրենիք - ԶՄԴ» խմբակցութեան ղեկավար՝ Ա. Յարութիւնեան

ՀՅԴ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՍԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

Անդրադառնալով նախընթաց օրերուն Արցախի Հանրապետութեան դէմ յաճախակի դարձած Ատրպէյճանի սադրանքներուն, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն Մարմինը հրապարակած է հետեւեալ յայտարարութիւնը.

1- Ի սկզբանէ, միտումնաւոր խեղաթիւրելով Լեռնային Ղարաբաղի խնդրի Եուրօնը, Ատրպէյճանի հետեւողականօրէն իրականացրել է եւ շարունակում է ցեղային գտման քաղաքականութիւնը:



Միջազգային իրաւունքի եւ ԽՍՀՄ օրէնսդրութեան պատշաճ պահպանմամբ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ինքնորոշուել է իր պատմական տարածքում՝ 1991թ. Սեպտեմբերի 2-ին հռչակելով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութեան անկախութիւնը, այն հաստատելով նոյն թուականի Դեկտեմբերի 10-ին հանրաքուէով:

Գործող զինադադարի պայմաններում, սահմանագծում պարբերական սադրանքներից յետոյ, 2020թ. Սեպտեմբերի 27-ին՝ օգտուելով միջազգային իրավիճակից, Հայոց պետականութիւնը թուլացնող Հայաստանի գործող իշխանութիւնների քաղաքականութիւնից, անտեսելով Զելսինքեան Եզրափակիչ Աքթի (1975թ.)՝ մասնաւորապէս ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքից զերծ մնալու միջազգային պարտաւորութիւնը, Թուրքիայի բացայայտ աջակցութեամբ, ինչպէս նաեւ միջազգային ահաբեկչական խմբաւորումների անմիջական ներգրաւմամբ Ատրպէյճանի սանձազերծեց Նոր պատերազմ:

Հակառակ 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեանը, Ատրպէյճանի ռազմատեսչ սպառնալիքների եւ ՀՀ իշխանութիւնների յանձնուողական վարքագծի արդիւնքում Ատրպէյճանի վերահսկողութեանը յանձնուեցին Արցախի եւ Հայաստանի անվտանգութիւնն ապահովող բազմաթիւ տարածքներ եւ դիրքեր: Ատրպէյճանական ռազմական յարձակողապաշտութեան եւ ներխուժման հետեւանքով բռնագրաւուած են Հայաստանի Հանրապետութեան տարածքները: Արցախից բռնի տեղահանուած մեր հազարաւոր հայրենակիցները շարունակում են դիմագրաւել ճգնաժամը, անորոշ է իրենց բնակավայրեր վերադառնալու հեռանկարը:

Ինչպէս 44-օրեայ պատերազմի ընթացքում, այնպէս էլ դրան յաջորդող ժամանակահատուածում, Ատրպէյճան եւ նրա դաշնակիցներն իրագործել են մարդկութեան դէմ ուղղուած, պատերազմական յանցագործութիւններ՝ կիրառելով արգելուած զինատեսակներ, թիրախաւորելով քաղաքացիական ենթակառուցուածքներ եւ խաղաղ բնակչութեանը, խախտելով ռազմագերիների պահպանման վերաբերեալ միջազգային նորմերը, խոչընդոտելով գոհուած անձանց մարմինների դուրսբերման միջազգային պարտաւորութիւնները:

Ատրպէյճանի շարունակում է մնալ տարածաշրջանային անկայունութեան աղբիւր, որի դրսեւորումներից մեկն էլ 2021 թ. Յունիսի 15-ին Թուրքիայի ու Ատրպէյճանի նախագահների ստորագրած, այսպէս կոչուած Շուշիի խիստ անընդունելի հռչակագիրն է:

Մարդկութեան դէմ ուղղուած եւ միջազգային իրաւունքով դատապարտելի այս գործողութիւնները դեռեւս չեն արժանացել համընդհանուր միջազգային գնահատականի, որն իր հերթին առաւել սանձարձակ է դարձրել ատրպէյճանական իշխանութիւնները՝ շարունակելու ցեղային գտման, մշակութային արժեքների ոչնչացման, Արցախի հայաթափման ցեղասպանական քաղաքականութիւնը:

Մտացածին պատճառաբանութիւններով, «բնապահպանների» անուան տակ հանդէս եկող ատրպէյճանական սադրիչների կողմից Շուշի-Քարինտակ ճանապարհահատուածը պարբերաբար փակելը, ռուս խաղաղապահներին սադրելը, դեպի Արցախի Հանրապետութեան տարածք մուտք գործելու փորձերը, գիւղատնտեսական աշխատանքներ կատարող խաղաղ բնակչութեան նկատմամբ ատրպէյճանական զինուած միաւորումների շարունակական թիրախաւորումը Ատրպէյճանական ռազմատեսչ սադրանքների ցայտուն դրսեւորումներ են:

Ատրպէյճանի ոտնահարում է Քաղաքացիական եւ քաղաքական, ինչպէս նաեւ Տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքների մասին ՄԱԿ-ի եւ այլ միջազգային դաշնագրերում ամրագրուած

ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմին 12.12.2022թ.

Շար.՝ 12 6

ԲԱՆԱՉԵՒ ՄԵԾԻ...

Սկիզբ՝ էջ 1

ծումները, ազգային-հոգեւոր ծաղկման, Սփիւռքի ամրապնդման, հայա-կերտումի, ազգակերտումի ու հայրենակերտումի:

Հայոց Տեղասպանութենէն ետք յատկապէս, Սփիւռքի մէջ ազգահա-ւաքի եւ հոգեւոր ու ազգային վերընծիւղման «Յոյսի Փարոս» Անթիլիասը այ-սօր, իր աշխարհատարած թեմերով, Սիսի պատմական Կաթողիկոսութեան եւ անոր թեմերուն շօշափելի ներկայութիւնը իբրեւ, մէկ եւ ամբողջական պատկերով ու միասնական ուժով կը գործէ, հաւաքականօրէն կենսագոր-ծելով իր նուիրական առաքելութիւնը:

Անցնող չորս տարիներու ընթացքին Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներու, ինչպէս նաեւ թեմերու ամ-փոփ տեղեկագիրները ցոյց տուին այն հսկայական աշխատանքը, որ կա-տարուած էր մեր ժողովուրդի բոլոր խաւերուն համար, տարբեր բնագա-ւառներէ ներս, յատկապէս մեր նոր սերունդին համար:



Մեր ժողովուրդին դիմագրւած մար-տահրաւերները՝ Միջին Արեւելեան երկիրներու ռազմաքաղաքական, տնտեսական եւ ընկե-րային տագնապները, ինչպէս նաեւ Հայաս-տանի ու Արցախի ապահովական տխուր ու անորոշ դրութիւնը, մեծագոյն մտահոգու-թիւնը կազմեցին եռօր-եայ ժողովի քննարկումներուն: Նորին Ս. Օծուբեան այցելութիւնները յատ-կապէս Լիբանանի եւ Սուրիոյ տագնապահար թեմերուն մէջ ապրող հայ ժողովուրդին, մեծ յոյս ներշնչած էին սոյն տառապող համայնքներու գա-ւակներուն, բալասանելով անոնց վշտաբեկ սրտին վերքերը:

Հայ եկեղեցւոյ վերանորոգման հրամայական անհրաժեշտութիւնը ներ-կայ աշխարհի յարափոփոխ իրականութեան դիմաց, անյետաձգելի կա-րիք է, որուն լծուած է Կիլիկեան մեր Ս. Աթոռը, Հայ եկեղեցւոյ Նուիրապե-տական միւս Աթոռներուն հետ միասին: Դարեւանքի ճամբով մարդուժի պատրաստութիւնը եւ Միաբանութեան երիտասարդացումը, քահանայից պատրաստութիւնն ու հայ հոգեւորականի ուսումնական մակարդակին բարձրացումը, քրիստոնէական դաստիարակութեան աշխույժ գործունէու-թիւնը, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական ծառայութիւնը, Աստուածաշուն-չի ներկայ աշխարհաբարի թարգմանութեան եւ հայ եկեղեցւոյ շարակնո-ցին ամբողջապէս եւրոպական ծայնագրութեամբ հրատարակութիւնը, Կի-լիկեան Ս. Աթոռը յառաջամարտիկի դերին մէջ դրին, Սփիւռքի վերանորոգ-ման, գաղութներու ամրապնդման ու հոգեւորապէս աճման մեծագոյն նպաստելով: Աւելին, ներկայ աշխարհի ընկերաբարոյական կենսաբան յու-զող մեծ խնդիրներուն պատասխան գտնելու եւ երիտասարդութիւնը այդ ուղղութեամբ դաստիարակելու ուղեցոյց-գրքոյկի մը հրատարակութիւնը, իր կարեւոր դերակատարութիւնը պիտի ունենայ հայ եկեղեցւոյ վերանո-րոգման եւ այժմեականացման ճամբուն վրայ: Նոյնը նաեւ կրօնի դասա-գրքերու վերատեսութեան ենթարկման պարագային, ինչպէս նաեւ երբ ընկե-րային ցանցերով, կրօնական պատգամները ւեփի հասանելի դառնան բոլորին:

Համաշխարհայինացման դժուարին ժամանակաշրջանին, երբ անա-դական արժեհամակարգը մեծ փոփոխութիւն կը կրէ, եկեղեցին դէպի ժո-ղովուրդին տանելու ջանքը գործնապէս արտայայտութիւն գտաւ Կիլիկ-եան Ս. Աթոռին ճամբով, կարելիութեան սահմաններուն մէջ ծիսական բա-րեկարգութեան իրագործումով, ինչպէս նաեւ ընկերային ծառայութեան շօ-շափելի արտայայտութիւն տալով:

Սփիւռքը վերակազմակերպելու միտող քննարկումները պիտի շարու-նակուին նաեւ 2023 տարուան ընթացքին, որուն համար նոր նշանող գե-տեղուեցաւ հորիզոնին վրայ, Ազգային Ընդհանուր Ժողովին ճամբով բոլոր թեմերը իրաւորելով վերանորոգելու նախ իրենք գիրեք, եւ այդ միջոցաւ Սփիւռքը, Նոյնիքն Հայաստանի ու Արցախի հզօրացման համար: Սփիւռ-քի գոյութեան խնդիրը՝ ինքնութեան պահպանումով, հայրենասիրութեան շարունակականութեան ապահովումով, յատկապէս ներկայ բազմա-ցեղ, բազմակրօն ընկերութեան միջավայրին մէջ, օրէ ցօր աճող մարտա-հրաւեր մըն է Կաթողիկոսութեան եւ իր թեմերուն համար:

Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչման ի խնդիր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ յատկապէս Վեհափառ Հայրապե-տին կատարած աշխատանքը բարձր գնահատանքի արժանի համարեց ժողովս, որոնք իրենց քաջ կեցուածքներով, մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն վերատիրացման արդար ձայնը միջազգային բեմերէն հըն-չեցուցին: Այս առումով տակաւին միջազգային հետապնդման առարկայ է Սիսի Կաթողիկոսարանին կալուածը իր իրաւատիրոջ վերադարձումը դատը:

Ընկերային ծառայութեան ծանր բեռը նաեւ իրենց ուսերուն առած Վե-հափառ Հայրապետին եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան գործունե-ութիւնը դարձեալ վեր է ամեն գնահատանքէ, որ հոգեւոր սպասաւորութե-ան կողքին մարդասիրական աշխատանքը դարձուցին առօրեայ աշխա-տանք, յատկապէս Լիբանանի եւ Սուրիոյ կարեւոր գաղութներուն մէջ: Այս գծով Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան թեմերու նիւ-

թական նպաստը, ինչպէս նաեւ Ալեքքօ եւ Անի Պեգիքեան բարերար ամո-լին եւ այլ բարերարներու աջակցութիւնը, իրենց կարեւոր դերը ունեցան սոյն գործի յաջողութեան մէջ: Մեր բոլոր թեմերն ալ բարոյական պարտա-ւորութիւն ունին կենսական սոյն առաքելութեան մասնակից դառնալու, ծանր վիճակէն դուրս բերելու Սփիւռքի մայր գաղութները:

Մեր համազգային առաքելութիւնը կը կենսագործուի, մեր ժողովուր-դին անվերապահ մասնակցութեամբ եւ միասնական ոգիի ամբողջական դրսեւորումով, համախմբուելով մեր ազգի հիմնարկներուն շուրջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնն է՝ մեր ժողովուրդի գա-ւակները համախմբել հայ եկեղեցւոյ եւ մեր ազգային դրօշին ներքոյ, առանց յարանուանական, կուսակցական եւ կամ այլ խմբաւորմանց ներկայացու-ցած տարբերութիւններուն, մէկ ազգի պատկանելիութեան գիտակցութեամբ:

Մեր ժողովուրդի կենսաբան յուզող խնդիրներուն ներկայացումն ու քնն-նարկումը, ինչպէս հայ ընտանիքը՝ իբրեւ առանցքը հայու գոյութեան, հա-յակերտումը՝ երաշխիքը հայու ինքնութեան, երիտասարդութիւնը՝ աւիշը հայ կենսաբան, Սփիւռքը՝ մասնակից Հայաստանի ու Արցախի հզօրացման եւ Սփիւռքի վերակազմակերպման հրամայականը, խոր վերլուծման առաջ-նորդեց մասնակիցները:

Ընտանիք հասկացութեան նորաձեւութիւնները՝ անաւորականէն տար-բեր, խառն ամուսնութիւնները, ամուսնալուծութիւնները, զաւակներու հա-յեցի դաստիարակութիւնը, բաժնուած ընտանիքներու զաւակներուն անո-րոշ դրութիւնը, երիտասարդութեան ներգրաւումը ազգային գործունէութե-ան տարբեր ոլորտներուն մէջ, որպէս ապագայի յոյսը մեր հաւաքական գոյութեան, հայրենակերտման ու հայրենասպասարկութեան մասնակցու-թիւնը, եւ վերջապէս Սփիւռքի վերակազմակերպման հաւաքական ճիգը՝ առաջնորդութեամբ Սփիւռքի մեծագոյն հոգեւոր ու ազգային Կեդրոնին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, նոր ուղեցոյց ստացան հաւա-քական մտածողութեան ճշգրիտ բանաձեւումով:

Սփիւռքի մայրուն ըլլալու իրողութիւնը, հակառակ նորօրեայ իր ձեւա-

փոխումներուն եւ բազ-մաշերտ հատուածնե-րուն, փաստացի տուեալ է Սփիւռքը ինքնագոյ, ինքնանպատակ եւ ինք-նավախճան գոյութիւն չէ: Ան ամբողջական մասն է հայութեան: Ան զօրավիճ է հայրենիքին, ո՛չ միայն հեռուէն դիտո-ղի, նիւթապէս օժանդա-կողի կարգավիճակով, այլեւ մասնակից ի խըն-դիր Հայաստանի եւ Արցախի հզօրացման: Անցնող երեսուներկու տարիներ-ու ընթացքին, Հայաստան-Սփիւռք եւ Սփիւռք-Հայաստան փոխյարաբե-րութիւնները զանազան փուլերէ անցան, սակայն Սփիւռք-Հայաստան փոխ-յարաբերութիւնը վտանգաւոր հանգրուանի հասած է այժմ:

Հայաստանը մեզ բոլորս միացնող եւ հայութեան տարբեր հատուած-ները իրարու կամրջող ոյժը պետք էր ըլլար: Սփիւռքի հզօրացումը, հզօրա-ցումն է հայրենիքին, իսկ անոր շլատումն ու պառակտումը՝ կամաւորա-պէս հրաժարումն է հայկական պահանջատիրութենէն, ու համահայկա-կան խտէլներէն: Հայաստանի պետութեան որդեգրած ներկայ մօտեցու-մը Սփիւռքի նկատմամբ, իր անկանխատեսելի, բայց ամեն պարագայի ժխ-տական հետեւանքները կրնայ ունենալ: Անաւորական Սփիւռքը ունի իր կա-ռոյցները, որոնք Հայոց Տեղասպանութենէն ետք կազմաւորեցին աշխար-հացրիւ հայութիւնը, որ տարբեր գաղութներու մէջ համախմբուած կ'ապ-րի այդ կառոյցներուն շուրջ: Սփիւռքահայութեան վերստին համախմբումը մեր ազգի գերագոյն խտէլներուն շուրջ, հրամայական պահանջք է, նոր ու մասնագիտական համակարգումով եւ աշխատակարգով, յատկապէս երիտասարդութեան ներգրաւումով, ինչ պայմաններու գնով ալ իրագոր-ծելի ըլլայ այդ:

Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը, հակառակ գոյութիւն ունեցող տարակարծութիւններուն եւ բաժանարար այլեւայլ կեցուածքնե-րուն, երաշխիքն է մեր ազգի միաւորման եւ հայկական գոյապահպան-ման, որ միշտ պետք է պահպանել ամուր եւ անխոցելի: Ուստի, պիտի շա-րունակենք զօրավիճ կանգնիլ Հայաստանի ու Արցախի հզօրացման նպաս-տող բոլոր ծրագիրներուն, որոնց մէջ գործնական առաջնահերթութիւն է հայոց բանակին հզօրացումը: Ժողովս նաեւ արձանագրեց թեմերէն եկած բոլոր հայակերտ ու հայրենաշէն, ինչպէս նաեւ վարչական ու կանոնագրա-յին բարեկարգումներու առաջարկները, զանոնք իբրեւ աշխատանքային ու-ղեցոյց դնելով նորընտիր Ազգային Կեդրոնական Վարչութեան ձեռքերուն մէջ:

Նոր հորիզոններու բացուող մարդկութիւնը, ներկայ կրօնական բազ-մազանութեան, մշակութային խաչաձեւումներու, ռազմաքաղաքական բա-խումներու, առողջապահական նոր սահմանափակումներու, իսկ մեր ժո-ղովուրդը հայրենական անապահովութեան, հայեցի կրթութեան վտան-գուածութեան, եւ դեռ տասնեակներով նոր մարտահրաւերներու ալեկոծու-թիւններուն յանձնուած ըլլալով հանդերձ, մենք մեր ժողովուրդին նաւը պիտի առաջնորդենք դէպի խաղաղ նաւահանգիստ, հաւաքական ճիգով եւ գի-նուած անվախ նաւավարի աներեր քաղաքականութեամբ, միասնական գոր-ծելաձեւը որդեգրելով իբրեւ միակ ուղին մեր եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկ-իոյ Կաթողիկոսութեան, մեր ազգին ու մեր յաւերժական հայրենիքին:



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ...

Սկիզբ՝ էջ 1

Նորին Ս. Օծուբինը Հայրապետական օրհնութեամբ ողջունել է ետք ժողովը, ներկաներուն յայտնեց, որ մեր ժողովուրդի պատմութեան վճռորոշ հանգրուանին գումարուող այս ժողովը կոչուած է այնպիսի որոշումներ առնելու եւ աշխատանքի ուղղութիւններ ճշդելու, որոնք մեր Ս. Աթոռին համազգային առաքելութեան նոր ծաւալ ու շեշտ պիտի տան:



Ազգային Ընդհանուր Ժողովը իր եռօրեայ աշխատանքներուն երկրորդ օրը՝ 8 Դեկտեմբերին, յետ Կրօնական եւ Զաղաքական ժողովներու տեղեկագիրներու գեկուցման եւ քննարկման, տրամադրեց Սփիւռքի վերակազմաւորման առնչուած հրատապ թեմաներու: Այս գծով արծարծուեցան հետեւեալ նիւթերը. - քննարկեց, հայակերտում, երիտասարդութիւն,

Հայաստանի եւ Արցախի հզօրացման մասնակցութիւն եւ Սփիւռքի վերակազմակերպում: Իւրաքանչիւր նիստի աւարտին կատարուեցան լայն քննարկումներ եւ ներկայացուեցան առաջարկներ, որոնք ուղեգիծ պիտի ըլլան 2023 տարուան Սփիւռքի վերակազմակերպման նուիրուած Վեհափառ Հայրապետին հռչակագիրին, ինչպէս նաեւ որդեգրուին նորընտիր Ազգային Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ քառամեայ գործունէութեան մէջ:

Ա. նիստը նուիրուած էր «Հայ Ընտանիքը՝ Առանցքը Հայու Գոյութեան» նիւթին:

Բ. նիստը՝ «Հայակերտում՝ Երաշխիքը Հայու Ինքնութեան» նիւթին:

Գ. նիստը՝ «Երիտասարդութիւնը՝ Աւիշը Հայ Կեանքին» նիւթին:

Դ. նիստը՝ «Սփիւռքը՝ Մասնակից Հայաստանի Ու Արցախի Հզօրացման» նիւթին:

Ազգային Ընդհանուր Ժողովը իր երրորդ օրուան նիստերը գումարեց 9 Դեկտեմբեր 2022-ին:

Ժողովի երրորդ օրուան երկրորդ կիսուն, Ուրբաթ, 9 Դեկտեմբեր 2022-ին, պատգամաւորները ժողովին ներկայացուցին թեմերէն եկած իրենց առաջարկները, ինչպէս նաեւ լսեցին, քուէարկեցին ու վաւերացուցին բանաձեւի, ընտրական ու տնտեսական յանձնախումբերու գեկուցները, ընտրեցին յառաջիկայ քառամեակին Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Զաղաքական ժողովները եւ աւարտին լսեցին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամը:

Հայրապետը իր պատգամին մէջ, առաջին հերթին, իր անսահման ուրախութիւնը յայտնեց՝ ի տես ժողովի հեզասահ ընթացքին, որ ինքնին պերճաբար վկայութիւն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովի ճամբով մեր հայրենիքին, եկեղեցւոյ եւ ազգային արժեքներուն ու իտեալներուն նկատմամբ մեր ունեցած յանձնառութեան, բծախնդրութեան եւ միասնական ոգիով առաքելութիւնը շարունակելու վճռականութեան: Հայրապետը իր խօսքին մէջ ըստաւ, թէ տարբերութիւններ կրնանք ունենալ, սակայն համազգային արժեքներու, մտահոգութիւններու, վտանգներու գծով ներքին չեն ո՛չ մէկ տեսակ ներքին լարուածութիւն, զգայնութիւն ու բեւեռացում՝ թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի եւ թէ Սփիւռքի մէջ: Ազգային Ընդհանուր Ժողովը եկաւ տեսանելի կերպով արտայայտելու, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կոչուած է մեր ժողովուրդը համախմբելու սրբազան առաքելութեան շուրջ: Ան իր գնահատանքը յայտնեց պատգամաւորներուն, որոնք ժողովուրդին կողմէ ընտրուելով եկան Անթիլիասի Մայրավանք եւ մասնակից դարձան Ազգային Ընդհանուր Ժողովի աշխատանքներուն՝ իրենց հետ բերելով ժողովուրդին ցաւերը, մտահոգութիւններն ու ակնկալութիւնները:

Հայրապետը իր պատգամին մէջ ընդգծեց՝ ըսելով, թէ որեւէ մէկ ժողով իր ճշմարիտ դիմագիծը ու հարազատ Էութիւնը կը ստանայ ժողովէն ետք, երբ ժողովի ընթացքին արտայայտուած մտահոգութիւնները, արժեւորումները եւ որոշումները կեանքի վերածուին: Յաճախ կրկնեցինք ու անձնապէս պիտի յիշեցնեմ, թէ կարելոր տարբերութիւն կայ Կաթողիկոսարանին եւ Կաթողիկոսութեան միջեւ. Կաթողիկոսարանը կը գործէ ի սպաս Կաթողիկոսութեան. մէկը Անթիլիաս է, իսկ միւսը՝ ամենուրեք: Կաթողիկոսութիւնը մեր թեմերն ու ժողովուրդն են: Հոս կատարուած աշխատանքը թեմերու ճամբով պէտք է երթայ մեր ժողովուրդին եւ տուեալ միջավայրին համահունչ կերպով կեանքի պէտք է վերածնայ: Ուստի, պէտք է մտածել, թէ ինչպէ՞ս կարելի է աւելի գործօն կերպով թեմերը մասնակից դարձնել հաւաքական առաքելութեան, Կաթողիկոսարան-թեմ գործակցութիւնը առաւել եւս ամրացնելով, յայտնեց Սրբազնագոյն Կաթողիկոսը:

Շարունակելով իր խօսքը՝ Նորին Ս. Օծուբինը ըստաւ, թէ Ազգային Ընդհանուր Ժողովի գումարումը վերոյիշեցման առիթ է, թէ ինչ որ կը կատարուի Կաթողիկոսարանին կողմէ այստեղ ապրող միաբաններուն կամ Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ չէ որ կը կատարուի միայն, այլ՝ մեր թեմերուն, բարեկամներուն, բարերարներուն ու ազգայիններուն մասնակցութեամբ:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս իր գնահատանքը յայտնեց ժողովին եւ աղօթք բարձրացուց առ բարձրեալն Աստուած, որ ծաղկեցնէ, հզօրացնէ, լուսաւորէ եւ պայծառակերպէ հայ ժողովուրդին կեանքը՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ, անսասան պահէ մեր եկեղեցին ու հայրենիքը այս դժուարին օրերուն, որպէսզի միասնական ոգիով



Կարողանանք շարունակել մեր առաքելութիւնը:

Ապա, ժողովականները, Հայրապետին գլխաւորութեամբ, միաձայնութեամբ երգեցին «Կիլիկիա» քայլերգը եւ Հայրապետական մաղթերգը:

Ստորեւ կը ներկայացնենք Ազգային Կեդրոնական Վարչութեան նորընտիր Կրօնական ու Զաղաքական ժողովներու անուանացանկը. -

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Գերշ. Ս. Կոմիտաս Արք. Օհանեան
2. Գերշ. Ս. Օշական Արք. Զոլոյեան
3. Գերշ. Ս. Սեպուհ Արք. Սարգիսեան
4. Գերշ. Ս. Գեղամ Արք. Խաչերեան
5. Գերշ. Ս. Նարեկ Արք. Ալեւմեզեան
6. Գերշ. Ս. Խորէն Արք. Տողրամաճեան
7. Գերշ. Ս. Շահան Արք. Սարգիսեան
8. Գերշ. Ս. Անուշաւան Արք. Դանիէլեան
9. Գերշ. Ս. Բաբգէն Արք. Զարեան
10. Գերշ. Ս. Շահէ Արք. Փանոսեան
11. Գերշ. Ս. Գրիգոր Արք. Զիֆթճեան
12. Գերշ. Ս. Մակար Եպս. Ազգարեան
13. Գերշ. Ս. Մեսրոպ Եպս. Սարգիսեան
14. Գերշ. Ս. Թորգոմ Եպս. Տոնոյեան
15. Գերայ. Ս. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան
16. Հոգշ. Ս. Պարոյր Վրդ. Շերնեզեան
17. Հոգշ. Ս. Յովակիմ Վրդ. Բանճարճեան

ԶԱՐԱԶԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Ստեփան Տէր Պետրոսեան (Լիբանան)
2. Դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան (Լիբանան)
3. Դոկտ. Նորա Պայրազտարեան (Լիբանան)
4. Շահան Գանտահարեան (Լիբանան)
5. Յակոբ Հաւաթեան (Լիբանան)
6. Տիգրան Ճինկալեան (Լիբանան)
7. Ալեք Մուրատեան (Լիբանան)
8. Արթուր Նազարեան (Լիբանան)
9. Սեդա Խըտըշեան (Լիբանան)
10. Գրիգոր Մահսերճեան (Արաբական Միացեալ Էմիրութիւններ)
11. Ռոստոմ Այլթապլեան (ԱՄՆ Արեւմտեան)
12. Յովսէփ Աւետեան (Իրան)
13. Կայծակ Չէյթեան (ԱՄՆ Արեւմտեան)
14. Տըքթ. Տրդատ Մանկիկեան (ԱՄՆ Արեւելեան)
15. Հրաչ Յակոբեան (Սուրիա)
16. Տըքթ. Ժիրայր Պասմաճեան (Գանատա)
17. Տըքթ. Արմէն Տէրեան (Յունաստան)

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը թելադրենք Հալեպ բնակող վարձակալներուն, ներկայանալ Ազգ. Առաջնորդարանի հաշուապահութեան գրասենեակը եւ փակել 2022-ի տարեկան վարձը մինչեւ 31/12/2022, օգտուելու Կալուածոց Հոգաբարձութեան սահմանած գեղչէն: Նաեւ այն վարձակալները, որոնք կը բնակին երկրէն դուրս, պարտին իրենց տարեկան վարձերը փակել:

Կալուածոց Հոգաբարձութիւն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Կողմէ Հալեայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կազմակերպուած պաշտօնական ընդունելութեամբ դիմաւորուեցաւ:

Եկեղեցւոյ թաղամասը յարգարուած էր բարի գալստեան պատաններով:



Դպրաց դասը եւ ազգայինները ընդունեցին Սրբազան Հայրը եկեղեցւոյ մուտքին: ՀԱՄԻ-ի փողերախումբը հնչեցուց Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգները, ապա քրիստոնեայ համայնքապետերը բարի գալուստ մաղթեցին Սրբազան Հօր եւ միասնաբար ուղղուեցան դէպի եկեղեցի: Տեղի ունեցաւ աղ ու հացի ականդակական օրհնութիւն, Համազգայինի «Սարգսրապատ» պարաֆունտի անդամուհիներուն տարազաւոր ներկայութեամբ, ապա ոչխարի զենում: «Ուրախ Լեր» եւ «Հրաշափառ» շարականներու երգեցողութեամբ եւ եկեղեցւոյ զանգերուն ղօղանջներով Սրբազան Հայրը մուտք գործեց եկեղեցի, ուր ՀԱՄԻ-ական տարազաւոր սկաւտները կանգնած էին դիմաւորելու զայն: Պաշտօնական ընդունելութեան ներկայ էին ՀՀ Հալեայի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդակալ-Հիւպատոսը, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան Խումբի ղեկավարը, պետական երեսփոխանը, Ազգ. Կեդր. Վարչութեան, Երեսփոխանական Ժողովի, Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Կրօնական Ժողովի անդամները, շրջաններու ազգ. երեսփոխաններ եւ ազգայիններ, հալեայահայ կազմակերպութիւններու, բարեսիրական, մարզական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդը եւ կաթողիկէ համայնքի ներկայացուցիչներ, Հայ Աւետարանական համայնքապետի եւ համայնքի ներկայացուցիչներ, քրիստոնեայ համայնքապետերը եւ հաւատացեալ ժողովուրդը, որոնք եկած էին շերմեանդութեամբ դիմաւորելու Նորընտիր Առաջնորդ Սրբազան Հայրը:

Եկեղեցւոյ մէջ, Կանոնական աղօթքէն ետք, Հոգ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան արաբերէնով բարի գալուստ մաղթեց Առաջնորդ

Սրբազան Հօր, ապա ընթերցեց Առաջնորդին կենսագրութիւնը: Արժ. Տ. Չարեհ Քինյ. Շաքարեան հայերէնով ներկայացուց Նորընտիր Առաջնորդը ժողովուրդին, յայտնելով, որ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինումով Սրբազան Հայրը Բերիոյ Հայոց Թեմ Ժամանեց Նախ որպէս Հայրապետական Նուիրակ, ապա Ազգ. Երեսփոխանական 172-րդ ժողովի որոշումով ընտրուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ: Այս առիթով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը իր անդրաձայն պատգամը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին:

Գերաշնորհ Տեր Մակար արարողութեան ընթացքին արտասանուած աղօթքին բառերը մէջբերելով, Աստուծոյ ողորմութիւնը խնդրեց եւ աղօթեց մանաւանդ Սուրբիոյ համար, որ ներկայիս դժուարութիւններ եւ մարտահրաւերներ կը դիմագրաւէ, քաջ գիտնալով, որ Աստուած պիտի տայ ցուցանիշը իր բարութեան, ճիշդ այնպէս ինչպէս տուաւ Դաւիթ Մարգարէին եւ մեր Փրկիչին՝ Քրիստոսի ճամբով: «Միայն Աստուծոյ օգնութեամբ, առաջնորդութեամբ, Անոր տուած կարողութեամբ եւ միասնական ուժերով մենք կրնանք մեր կեանքի նաւը յառաջ տանել դէպի խաղաղ և անհանգիստ: Ալիքները, փոթորիկները միշտ պիտի բարձրանան եւ պիտի հարուածեն մեր կեանքի նաւուն, բայց եթէ մենք մեր սրտին, հոգիին եւ կեանքին մէջ ունինք բարի նաւապետը եւ մեր աչքին առջեւ ունինք օրինակը բարի հովուապետին՝ Քրիստոսին, մեր պատմութեան Սրբազան Հայրերուն եւ ազնուական մարդոց՝ անոնցմով լեցուած, զօտեպնդուած, զօրացած եւ քաջալերուած՝ ուրախութեամբ, եւ ճակատնիս բարձր, դժուարութեան դիմաց վստահաբար պիտի առաջնորդուինք եւ յաղթանակենք», հաստատեց Սրբազան Հայրը:

Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան Թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին փոխանցեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հայրական սերը, ողջոյններն ու օրհնութիւնները:

Ապա Սրբազան Հայրը որդիական սիրով երախտագիտական խօսք ուղղեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ապա թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովին, Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Կրօնական Ժողովի անդամներուն, պատասխանատուներուն եւ ժողովուրդի գաւազներուն, այն վստահութեան համար, որոնք ունեցան Սըրբազան Հօր նկատմամբ:

Սրբազան Հայրը օտար լեզուով խօսք ուղղեց ներկայ քրիստոնեայ համայնքապետերուն, մաղթելով որ ձեռք-ձեռքի տալով ծառայեն ի փառս Աստուծոյ եւ ի պանծացումս քրիստոնեական եկեղեցիներուն:

Արարողութիւնը ավարտին հասաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով, «Տերունական Աղօթք»-ի եւ «Կիլիկիա» մաղթերգի հաւաքական երգեցողութեամբ:

Ապա տեղի ունեցաւ աջահամբոյր:

ՀՅԳ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻՆ...

Սկիզբ՝ էջ 3

իրաւունքները, մինչդեռ Արցախի Հանրապետութիւնը միակողմանիօրէն եւ կամովին ստանձնել է բազմաթիւ համաձայնագրերով ամրագրուած պարտաւորութիւններ, որոնց համաձայն ինքնորոշման իրաւունքի ուժով տուեալ ժողովրդի իրաւունքն է լիակատար օգտուելու իր բնական հարստութիւններին եւ աղբիւրներին:

Դատապարտելով Ատրպէյճանի շարունակուող ու միջազգային իրաւունքին հակասող հակահայ քաղաքականութիւնը, անվերապահ աջակցութիւնը յայտնելով Արցախի Հանրապետութեան հերոսական ժողովրդին, վըստահեցնելով, որ իր ողջ կարողականութիւնը պատրաստ է ի սպաս դնել արցախահայութեան իրաւունքների պաշտպանութեանը:

ՀՀԳ Հայաստանի Գերագոյն Մարմինը

Դիմելով միջազգային հանրութեանը՝ կոչ է անում գնահատական տալ ատրպէյճանական յարձակողապաշտութեան, ցեղասպանական քաղաքականութեան, դատապարտել Հայաստանի ու Արցախի տարածքների բռնազրաւումը, միջոցներ ձեռնարկել սանձելու Պաքուի վարչակարգի ծաւալապաշտական նկրտումները, պատասխանատուութեան ենթարկել ռազմական յանցագործութիւններ կատարած անձանց, պատժամիջոցներ կիրառել Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան նկատմամբ, նպաստել ՄԱԿ-ի կանոնադրութեան համաձայն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրացմանը, գործուն քայլեր իրականացնել բոլոր հայ ռազմագերիների, պատանդների ու այլ պահուող անձանց հայրենադարձման հարցում, ինչպէս նաեւ անյետաձգելի քայլերի ձեռնարկել Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման միջազգայնօրէն ճանաչուած միակ՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան միջնորդական ձեւաչափի վերականգնման ուղղութեամբ:

Չօրակցելով Ռուսաստանի խաղաղապահ զօրախմբին՝ կոչ է յղում վերջինիս իր առաքելութեանը համապատասխան, բոլոր հնարաւոր միջոցներով ապահովել Արցախի բնակչութեան անվտանգութիւնը, բնականոն գործունեութիւնը, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների միջեւ անխափան կապը եւ կանխել Ատրպէյճանի ցեղասպանական նպատակադրումները:

Միաժամանակ, Հայաստանի իշխանութիւնները պարտաւոր են ապահովել Արցախի Հանրապետութեան անվտանգութեան երաշխաւորի Հայաստանի Հանրապետութեան յանձնառութիւնը, Արցախի Հանրապետութեան ինքնորոշուած ժողովրդի իրաւունքների պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ գործուն քայլեր ձեռնարկել Հայաստանի եւ Արցախի միջեւ անխափան փոխադրամիջոցների հաղորդակցութեան, Արցախ կազմի, էլեկտարականութեան մատակարարման, հեռախօսային եւ համացանցային կապի անխափանութիւնն ապահովելու ուղղութեամբ:

Աներկբայ է՝ Արցախի հիմնահարցի քաղաքական լուծման միակ միջոցը Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրացումն է:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ...

Սկիզբ՝ էջ 3

Ժարուժը, իրադարձարի ռեժիմի խստօրէն պահպանումը, Լաչինի միջանցքում՝ ռուս խաղաղապահների հսկողութեան ներքոյ տեղաշարժի անխափան իրականացումը առանցքային են Լ.Ղ. հիմնախնդրի քաղաքական հանգուցալուծման, տարածաշրջանում երկարատեւ խաղաղութեան ու կայունութեան հաստատման, ժողովուրդների խաղաղ համակեցութեան համար:

Ողջ միջազգային հանրութեան, այդ թւում՝ ՄԱԿ Անվտանգութեան Խորհրդի, ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահող՝ անդամ երկրների հրատապ ուշադրութիւնն ենք իրաւորում, որ Ատրպէյճանի գործողութիւնները կարող են հանգեցնել լայնածաւալ մարդկային աղետի: Ընդ ծում ենք Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքների՝ անվտանգութեան ապահովման միջազգային մեքանիզմների գործարկման կամ վերագործարկման անհրաժեշտութիւնը՝ այս նպատակով առաջիկայում խորհրդակցութիւններ կը սկսենք միջազգային գործընկերների հետ»:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գաւաքեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԹԱԳԷՈՍ ԳԱԻԼԱՔԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 18 Դեկտեմբեր 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ-Հալեայ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնապահէն ներս:



Պրիսմակերպ

ԴԱՍԸՆԿԵՐՍ ՏԻԳՐԱՆԸ



Մարուշ Երամեան

Ռիչըրտ Թընկըրեան.

Եթե մականունը այսքան իւրայատուկ չըլլար, հաւանաբար միտքէս չանցնէր իսկ, որ այս Ռիչըրտը իմ տարիներու դասընկերս Տիգրանն է: Բայց Թընկըրեան մականունով մէկ ընտանիք կար Յալէպի մէջ, այն ալ Տիգրանին ընտանիքն էր՝ մայրը, հայրը եւ երկու եղբայրները:

Թընկըրեանները եկած են Արեւմտահայաստանէն՝ Պոլսէն. իրենց մասին գրուած գիրքի մը մէջ կ'ընտելի, թէ անոնց տոհմը կը սկսի 1700-ականներէն եւ կը հաշուէ արուեստագետներ, դիւանագետներ, թարգմաններ եւ կրօնաւորներ:

Արուեստագետներու ընտանիք էին. հայրը՝ Անդրանիկը քանդակագործ էր, իսկ մայրը՝ Շանելի ձեւաւորող: Տիգրանն ալ, մեծ եղբայրը՝ Յարութն ալ կը գծէին, կը նկարէին եւ գրեթէ միշտ ներկայ էին Զարէն Եփփէ Ազգային Ճեմարանի պարբերաթերթին՝ «Ծիլեր»ուն մէջ, որուն խմբագրական խորհուրդին մաս կը կազմէր Տիգրանը:



Ինչպէս յաճախ կը պատահի, երկրորդականը աւարտելէ ետք Յալէպի Զարէն Եփփէ Ճեմարանին տաքուկ յարկին տակ, մեզ մէ իւրաքանչիւրը գնաց իր ուսումին, գնաց իր կեանքը փնտռելու: Եւ ինչպէս յաճախ՝ բոլորս կորսնցուցինք գիրար կեանքի թոհուրոհին մէջ:

Կեանքը սակայն երբեմն, ըստ իր քմահաճոյքին, կարծես ուզելով մեր պատանութիւնը յիշեցնել մեզի եւ ժպիտ տալ գորշ օրերու մէջ, մեզ իրարու դէմ կը հանէ: Այդպէս էր որ տասնամեակներ ետք հանդիպեցայ մտերիմ ընկերուհիս Լիային, սիրելի Անի Բարսեղեանին, մինչ ուրիշներու, ինչպէս Ֆիմիին, Մարալին կամ Սեդային դպրոցէն ետք տակաւին չեմ հանդիպած: Զեմ տխրիր, որովհետեւ վստահ եմ, որ օր մը կրկին պիտի հանդիպինք:

Այդպէս էր նաեւ որ օր մը, շատ անակնկալ ձեւով հանդիպեցայ Տիգրանին ... ձայնով: -LinkedIn-ը բերաւ անունդ եւ թիւդ,- գաւազեց Տիգրանը, որուն ձայնը բնաւ չէր փոխուած դպրոցի օրերէն:

Իմ գիտցած Տիգրանս էր՝ համեստ, մեղմախօս, համբերատար: Պարզապէս ձայնին մէջ տխրութիւն մը կար, որ նախապէս հոն չէր: «Արդեօք ինչերէ անցած է» մտածեցի եւ տխրեցայ իրեն համար. բոլորս ալ շա՛տ բաներէ անցանք մեր շրջանաւարտութենէն մինչեւ այսօր: Անկէ ետք յաճախ կը խօսէինք. ներկայ համացանցային դիւրութիւնները հաճելի կը դարձնեն կապուիլը հեռաւոր բարեկամներու հետ: Այդ գրոյցներուն ընթացքին պատմեց իր աշխատանքին մասին, որ այսօր իր կեանքին գլխաւոր հաճոյքը, զբաղումն ու հպարտութիւնը կը կազմէ:

Եւ ինչպէ՞ս հպարտ չըլլայ, երբ Յալէպէն ելած երիտասարդ որպէս, այսօր կը կենայ իր ասպարեզին լաւագոյն, մէկ ձեռքի մատներուն վրայ հաշուուող քանի մը մասնագետներու շարքին: Մասնագիտութեամբ թէեւ ճարտարապետ, բայց ասպարեզով մանրակերտեր շինելու վարպետներէն մէկն է Տիգրանը, որ պատուէրներ կը ստանայ աշխարհի չորս անկիւններէն եւ որուն անունն ու գործը, իր Tenguerian դժուար մականունով երեւցած են New York Times-ի (The Master Model Maker, by Julie Satow for NYT) եւ Architectural Digest-ի նման բարձրամակարդակ, մասնագիտական եւ աշխարհատարած հանդէսներու մէջ, կամ ամերիկեան «60 min.» հեռատեսիլի յայտագրով:

Իրն են օրինակ Նիւ Եորք քաղաքի Empire State Building-ին, Եանքի սթատիումին, Նիւ Եորքի շատ ինքնուրոյն շէնքերուն եւ Պէն Լատէնի մենատան մանրակերտերը: Ասոնք շատ փոքր օրինակներն են այն բոլոր գործերուն, որոնք աստիճան ամ աստիճան գինք բարձրացուցած են, հասցնելով այսօրուան պատուանդանին: Այս աշխատանքներէն իւրաքանչիւրը իր վրայ կը կրէ Տիգրանին հմուտ մատներուն եւ բժախնդրի խառնուածքին հետքերը, որոնք տարբեր կը դարձնեն եւ ամբողջովին այլ որակ կու տան այդ աշխատանքներուն, եւ կը ստիպեն մարդոց, որ իրեն դիմեն, երբ կատարեալ մանրակերտ մը ունենալու ձգտին:

«Բայց գիտե՞ս, - կ'ըսէ, - օրերով եւ տարիներով Շարաթ-Կիրակի չեմ ունեցած, արձակուրդի չեմ գացած. միայն աշխատեցի եմ, եւ աշխատեցի եմ ինքնամոռաց նուիրումով»:

Եթէ այդպէս չըլլար, ինք այլ մասնագետներէ տարբեր պիտի չըլլար: Արուեստագետի իր նուրբ հոգին նաեւ ուշադիր է դիմացիին հանդէպ եւ ներագգացողութեամբ կրնայ հասկնալ զայն, թափանցել անոր հոգիին խորը: Յետոյ տալ անելին, քան իրմէ պահանջուածը: Կը յիշեմ, որ պատանութեան տարիներուս տարօրէն հմայուած էի դասական պալէով եւ ձեւ մը կը փնտռէի այդ հմայքս յագեցնելու: Սովետական գրադարանը (Քուաթլի փողոց, Յալէպ) ինչ թերթ ու հանդէս որ գար, կը գնէի, հոն գտնուած պալէի լուրերը կարդալու եւ լուսանկարները վայելելու համար: Կը գնէի նաեւ ռուսական պալէի մեծ անուններուն նուիրուած գիրքերը, ինչպէս Կալինա Ուլանովայի կամ Մայա Փիլսեցքայայի մասին գրուած հատորները, որոնք նաեւ նկարներով հարուստ էին:

Այդ շրջանին էր, որ Տիգրանը կարծեմ Մայա Փիլսեցքայայի «Կարապը»-էն հատուած մը նկարեր էր եւ նուիրեց ինձի: Ընդունեցի էի մեծ հաճոյքով եւ ննջարանիս պատէն կախեցի զայն:

Տարիներ ետք մտածեցի՝ բայց ինչպէ՞ս գիտցաւ որ այնքան շատ կը սիրէի պալէն: Այդ օրերուն երկուքս ալ այնքան սակաւախօս էինք տակաւին: Երբ հարցուցի, պարզօրէն ըսաւ.

-Զեմ գիտեր, զգացեր էի ...

Յալէպի պատերազմէն շա՛տ առաջ Տիգրանը Նիւ Եորք գացեր էր: Պատերազմի տարիներուն այնքան մարդ գաղթեց, որ Յալէպի գաղութը գրեթէ պարպուեցաւ: Ոչ միայն գաղութը պարպուեցաւ, այլ նաեւ գաղթողները տկարացուցին համախմբումով գոյացած մեր զօրութիւնը, իսկ ուր որ գացին, համախմբում չկար, եւ մնացին ձուլումի ճիրաններուն մէջ բռնուած:

Այդ երեւոյթին դրական ու գեղեցիկ կողմն ալ կայ. կը մտածեմ՝ երբեմն շատ լաւ է գաղթելը, ինչպէս օրինակ Նանոր Սերայտարեանին պարագային (դուստրը Յովիկ է Յասմիկ Սերայտարեաններուն), որ ԱՄՆ գաղթելէ ետք շուրթակի մէջ շատ մեծ յաջողութիւններու ցուցաբերեց եւ կարեւոր յաջողութիւններու հասաւ, որովհետեւ իր բնածին տաղանքը պարարտ հող գտաւ. եւ զայն ոռոգող երաժիշտ-դաստիարակներ, ճիշդ ինչպէս Բարտի Մինասեանը նախ Երեւանի, ապա ԱՄՆ-ի մէջ (դուստրը Միհրանն է Այտա Մինասեաններուն) մեծ յաջողութեան հասաւ:

Նոյնն է Տիգրանին պարագան. եթէ ԱՄՆ հաստատուած չըլլար, պիտի կարենա՞ր ունենալ ասպարեզին այն յաջողութիւնը, պիտի ըլլա՞ր պահանջը նման մանրակերտեր պատրաստելու: Որովհետեւ մեր կողմերը՝ Արեւելքի մէջ շինարարութիւնը յաճախ կ'ընթանայ առանց քարտեզներու, ալ ուր մնաց մանրակերտեր պատրաստելու անհրաժեշտութիւնը:

Բայց Տիգրան պատանի տարիքէն, տակաւին միայն 14 տարեկան, ամառները Պէյրութ կ'երթար եւ իր գարմիկներէն մէկուն՝ Յակոբ Աթէշեանի ճարտարապետական գրասենեակին մէջ կ'աշխատէր, մանրակերտեր պատրաստելով, մինչ մենք բոլորս «կը հանգստանայինք» ամբողջ տարուան մեր «չարչարանքէն»՝ դաս տրուելէն:

Այդ տարիներուն, երբ շատ հաւանաբար տակաւին սկսած չէր մանրակերտեր պատրաստելու «նորոյթը» ԱՄՆ-ի մէջ, Պէյրութ, ըլլալով այդ ժամանակուան «Փղթի Փաղի»ն, հաւանաբար նման աշխատանքներ կ'ըլլային, «ՍԵԿը Սեուտական Արաբիոյ մէջ կառուցուելիք շէնքի մը համար էր», կ'ըսէ Տիգրան, որ արդէն փորձ եւ փորձառութիւն ձեռք կը ձգէր իր ասպարեզին համար, երբ մենք լողաւազ աններ եւ ակումբներ կ'երթայինք մեր օրերը «վայելելու»:

«Այդ տարիքիդ երբ բան մը կ'ընես, քեզի կը թուի թէ ամէն մարդ ալ կրնայ նոյնը ընել. բայց երբ գործիդ համար կը սկսին վճարել քեզի, կը զգաս որ կեանքիդ կարելու մէկ անկիւնադարձին առջեւ կը գտնուիս»:

Բայց օրերը ցոյց տուին, որ այդքան ալ հեշտ չէ իր ըրածը եւ թէ ամէն մարդ չէ որ կրնայ ընել: Առաւել՝ իր արուեստագետի խառնուածքն ու ուշադրութիւնը խօսակիցներուն հանդէպ ըսել տուած են իր կարեւոր աշխատակիցներէն մէկուն՝ Էլենթ Թերքըրի (ճարտարապետական HOK ընկերութեան Նիւ Եորքի գրասենեակի ձեւաւորումի տնօրէն) «Ան իսկական նկարիչ արուեստագետ է. գիտէ թէ ճիշդ ինչ պէտք է ինձի համար, ինչ ձեռք վերացակասութիւն: Նաեւ՝ բնաւ իր ժամկետերը չի խախտեր: Մենք գիրար լռութեամբ հասկնալու ունակութիւնը ունինք»:

Երբեմն կը մտածեմ՝ իրապէ՞ս այդքան շատ պահանջ կայ շէնքերու մանրակերտեր պատրաստելու, որ Տիգրանը մինչեւ այսօր, արդէն անելի քան քառասուն տարի նոյն ասպարեզին մէջ է եւ կը շարունակէ նոյն թափով: Մեզի համար մանրակերտերը շատ-շատ ինքնաշարժներու փոքր չափի խաղալիքներն էին՝ matchbox կոչուած այդ շատ հմայիչ օթօթերը, որոնցմէ անհաշիւ թիւով ուներ գարմիկս, եւ որոնք իւրաքանչիւրը իր գոյնով, մոտէլով եւ չափով գոց գիտեր:

Կային նաեւ տիկնիկներու փոքր տուները, որոնք նկարները միայն տեսեր էի եւ շատ գեղեցիկ գտեր: Բայց շէնքերու մանրակերտեր, ո՛չ, չէի հասկնար նպատակը: Նիւ Եորք Թայմզի յօդուածը կը բացատրէ.

«Բայց անոնք աշխատանքը մանկական խաղ չէ. ճարտարապետները մանրակերտեր կը պատուիրեն, որպէսզի երբ իրենց ծրագիրը հանրութեան ներկայացնեն, մէկ կողմէ կարենան նիւթակալը հայթայթողներ գտնել, միւս կողմէ՝ գրաւել հաւանական յաճախորդներ, որոնք բազմաթիւ միլիոններ պիտի վճարեն ունենալու համար բնակարան մը, որ տակաւին չէ իսկ կառուցուած»:

Տարօրէն հպարտ եմ այս խիստ համեստ դասընկերովս, որ այսօր իր ասպարեզին մէջ միջազգային հռչակ ունի՝ Richard Tenguerian.



ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՆՉՕՐ ՍՓԻՌՔԸ ԱՆՆՐԱԺԵՇՏ Է ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՄԱՐ ՈՒ ՆՉՕՐ ՆԱՅԱՍԱՆԸ ԱՆՆՐԱԺԵՇՏ Է ՍՓԻՌՔԻ ՆՉՕՐՈՒԹԵԱՆ» (ՅԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ԽՕՍՔԸ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՎՆԵՐ ՆՅԳ 132-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԲՐՈՒԹՎԱԾ ՆԱԷՊԻ ՆԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Ողջոյն ձեզի Դաշնակցութեան Լիբանանի ընտանիքին անունով: Երկու հայահոծ գաղութներ, ճակատագրակից, հոգեհարազատ համայնքներ, նոյն թշնամիին՝ Թուրքիոյ եւ Իսրայէլի ու անոնց հովանաւորած ահաբեկչութեան թիրախ Լիբանանի եւ Սուրիոյ հայութիւն:

Ողջոյն այս բեմէն Սուրիոյ Զանապուտութեան նախագահ տղթք: Պաշար ալ-Ասատին, որ աննկուն կամքով դիմադրեց Սուրիոյ դէմ շղթայազերծուած համաշխարհային պատերազմին: Նախագահ, որ մեծ բարեկամ է հայութեան եւ գուրգուրոտ՝ Սուրիոյ հայութեան նկատմամբ:

130 առաւել 2 տարուան հսկայ կաղնիի՝ ՅՅ Դաշնակցութեան, հիմնադրութեան ամեակը կը տօնենք միասնաբար:

Փետտեցէ՛ք ՅՅ Դաշնակցութեան նմանող կուսակցութիւն մը, որ ներկայութիւն է աշխարհի տարածքին 34 երկիրներու ու հարիւրաւոր քաղաքներու եւ գիւղերու մէջ:

Փետտեցէ՛ք կուսակցութիւն մը, որ հիմնուած է Օսմանեան եւ Տարական կայսրութեան օրերուն, իր ժողովուրդին հետ ապրած է Յեղասպանութիւն, անկախութիւն հռչակած է հայրենիքի մէջ՝ անկախութեան ձեռքբերման պատերազմով, հեռացած ու հեռացուած է հայրենիքէն, ապրած է համաշխարհային երկու պատերազմ, քաղաքական տարապայման միջավայրերու մէջ մասնակցած է հայութեան շահերուն պաշտպանութեան պայքարին՝ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ թէ ալլուր, դարձեալ հալածանքներու ենթարկուած է ու հայութեան շահին համար նահատակներ է տուած:



Տոյց տուէք կուսակցութիւն մը, որուն ակումբները կոչուած են ժողովրդային տուն, որուն ակումբները գրասենեակներ չեն, այլ պատանիին, երիտասարդին, վնոջ, ուսանողին ու արհեստաւորին, աղքատին ու հարուստին, երեց ու միջին սերունդին, հայուն կողքին յաճախ նաեւ օտարին առջեւ միշտ բաց եղած են ու մեղուաբոյն՝ աշխատանքի:

Տոյց տուէք կուսակցութիւն մը, որ ամբողջ տասնամեակներ գործած է ու ենթարկուած է զինք մասնատելու, բաժնելու, պառակտելու զանազան դաւադրութեանց, բայց միշտ մնացած է մէկ ու միացած:

Փետտեցէ՛ք ու գտէ՛ք կուսակցութիւն մը, որ արգիլեալ եղած է իր բնօրրակին մէջ, հալածուած՝ իր հայրենիքի վարչակարգէն, օսմանցի թուրքէն ու ցարական Ռուսիայէն, համայնավարութենէն ու զանազան երկիրներու մէջ պետական հարուածներու իբրեւ հետեւանք իրապարակ եկած նոր վարչակարգերէն, սակայն յաջողած է գոյատեւել ու միաժամանակ պահել ու զօրացնել ժողովրդային նեցուկը:

Փետտեցէ՛ք կուսակցութիւն մը, որ յարգանք պարտադրած է իր հակառակորդին ու մանաւանդ՝ թշնամիին: Կուսակցութիւն մը, որ իր լաւագոյն տղաքը զոհած է հարուածելու համար իր ժողովուրդին դէմ զէնք բարձրացնող կամ դաւ նիւթող տարրեր:

Փետտեցէ՛ք հին ու արդիական միջոցներով, բաղդատականներով կամ թերահաւատութեամբ, բայց պիտի չգտնէք: Պիտի չգտնէք մէկ հատիկ իսկ կուսակցութիւն մը, որ նմանի ՅՅ Դաշնակցութեան:

Յարտօրէն կ'ըսենք՝ ՅՅ Դաշնակցութեան նման կուսակցութիւն գոյութիւն չունի այսօր աշխարհի ամբողջ տարածքին: Սա ո՛չ մեծօսիկութիւն է, ո՛չ ամբարտաւանութիւն, ո՛չ՝ կուսակցամոլութիւն եւ ո՛չ ալ մեծամտութիւն:

Սա միայն փաստ է, աղաղակող իրականութիւն: Իսկ հակառակ այս բոլորին, հակառակ ծանրագոյն պայմաններուն մէջ գործելու փաստին, ո՛ր է գաղտնիքը այս կուսակցութեան գոյատեւման: Ո՛ր է գաղտնիքը 19-րդ դարուն հիմնուած, 20-րդ դարը պատուով անցուցած է 21-րդ դարուն իր 132-ամեակը տօնող ՅՅ Դաշնակցութեան ուժին:

Դաշնակցութիւնը ամէն բանէ առաջ, կազմակերպութիւն ըլլալէ իսկ առաջ, ժողովրդային շարժում է, ժողովրդային հոսանք եւ նոյնի՛սկ ժողովրդային փոթորիկ: Յայ ժողովուրդի արիւնտ արգանդէն ծնած, ժողովուրդին համար արդարութիւնն ու բարօրութիւնը կիզակէտ դարձուցած, ժողովուրդին պաշտպանութիւնը ստանձնած կուսակցութիւնն է Դաշնակցութիւնը:

Դաշնակցութիւնը հայութեան գիրկէն ծնած գաղափարական ուժ է: Իր հիմնադիրներուն իսկ պատգամով ժողովներն ու որոշումները, ընկերային, տնտեսական թէ քաղաքական հարցերու նկատմամբ իր կեցուածքները կը բխին գաղափարական ծրագրային ենթահողէ ու պատահականութեան արդիւնք եղող արտայայտութիւններ չեն:

Գաղափարը մեծագոյն ուժն է Դաշնակցութեան ու գերադաս ամենաբարձր նշանողը դաշնակցական մարդուն: Դաշնակցութիւնը գաղափարի ուժն է, հաւատամքի ուժն է մարդու ազատութեան, ընկերային արդարութեան, աշխատանքի քրտինքը յարգելու ուժն է: Ան ուժն է շահագործումը մերժող աշխատանքի եւ գործարարութեան ու միաժամանակ մարդկային իրաւունքներու արդար գործադրութեան:

Դաշնակցութեան ուժը եւ ուժին գաղտնիքը կազմակերպութիւնն է ու իր կանոնագիրը: Կանոնագիրը՝ դաշնակցական ընկերոջ համար, իսկ կազմակերպութիւնն ու կազմակերպութեան ծրագրերը՝ հայութեան զանգուածներուն եւ անոր նպատակներուն հասնելու համար:

Կանոնագիրը յաճախ խիստ ու սեփական ազատութիւնները զիջում պահանջող օրինագիրք է, որուն ենթարկուելու երդում կը կատարեն Դաշնակցութեան եկող տղաքն ու աղջիկները, կամովին, ազատ կամքով եւ առանց պարտադրանքի: Կանոնագիրը հիմքն է կուռ կազմակերպութեան եւ Դաշնակցութեան բարոյական սկզբունքները յարգելու պարտաւորութեան: Կանոնագիրը հիմքն է նաեւ մեր գաղափարաբանութեան ժողովրդավարութեան տուած յատուկ ու առաջատար սկզբունքին:

Շարքերէն մինչեւ բարձրագոյն ղեկավարութիւն բարձրացող բուրգը, եւ հակառակ ուղղութեամբ հաստատուած հաշուետուութեան սկզբունքը, ընտրական սկզբունքները թէ կարծիք արտայայտելու ազատ ու կազմակերպականօրէն առողջ աստիճանաւորումը, ընկերներու եւ մարմիններու միջեւ փոխադարձ յարգանքի սկզբունքով ճշդուած յօդուածները, օրինախախտ տարրերու նկատմամբ ընկերական վերաբերումն ու կարգապահական տնօրինումներու դաստիարակչական ու շինիչ մօտեցումը փաստեր են, որոնք ոչ միայն կ'արժեւորեն կարգապահ տարրերով կուսակցութիւն մը, այլ՝ իր ամուր կազմակերպութեան ի սպաս հայութեան դնելու անխախտ վճարակամութիւնը եւ ժողովուրդին շարունակաբար ծառայելու պատրաստակամութիւնը:

Յայ Յեղափոխական Դաշնակցութեան 132-ամեայ սլացքին հիմքը կը կազմեն հայութեան եւ անոր դատին ծառայելու գոյութեանական հաւատքն ու գործը: Այլապէս ինչո՞ւ ունենալ կուսակցութիւն, եթէ ան պիտի չծառայէ իր ժողովուրդին: Անվիճելի է այն, որ ՅՅ Դաշնակցութիւնը քաղաքական կուսակցութիւնն է եւ իբրեւ այդպիսին՝ քաղաքական առաջադրանքներով յառաջացող կուսակցութիւն: Զաղաքական կուսակցութիւն ըլլալէ աւելին, սակայն, Դաշնակցութիւնը է՝ ու կը մնայ՝ անպայման յեղափոխական կուսակցութիւն, որուն առաջնահերթ նպատակն է յեղափոխել մեր ժողովուրդի առօրեան ու զայն դուրս բերել երբեմն թմբիկէն, այլ տեղ՝ անտարբերութենէն, այլ ժամանակ՝ պարտաւորական ու անձնատուական տրամադրութենէն: Յեղափոխութիւն մը, որ ոչ միայն ուղղուած է թշնամիին, այլ նաեւ՝ մեր ժողովուրդը տկարացնող ներքին ախտերուն դէմ կամ ի նպաստ մեր ժողովուրդի բարօրութեան եւ գոյատեւման պայքարին:

Յեղափոխութեան մեկնակէտէն ծառայութեան դաշտ նետուող Դաշնակցութիւնը 132 տարի շարունակ, երկիրէն մինչեւ աշխարհի հեռաւոր անկիւններ, Արցախ, Յայաստան ու Ջաւախք, հոս՝ Սուրիա, թէ Լիբանան եւ Իրան եւ դեռ ծանօթ ու անծանօթ այլ վայրեր եղած է իր ժողովուրդին կողքին ու հասած անոր ծով կարիքներուն:

Ինք ու իրեն զօրակից միութեանց թէ անհատներու ճամբով Դաշնակցութիւնը դպրոց են եկելոցի կառուցած է, ուսուցիչ, խմբագիր, տնօրէն հայթայթած, հայապահպանման գործին երիտասարդներ տրամադրած, հիւանդին դեղ ու դարման, տնանկին երդիք, ծերին՝ գաւազան, ջքաւորին՝ պարէն, անպաշտպան հայուն՝ նեցուկ, հրկիզուող տան՝ հրշէջ, չորցող դաշտերուն՝ մշակ ու բանուոր, վտանգուած հայուն՝ զէնք ու պաշտպանութիւն, ընթերցումի կարօտ մարդուն՝ թերթ ու գիրք, եւ դեռ՝ մշակոյթ, գեղարուեստ, բժշկական կեդրոն, մասնագիտական խորհրդատուութիւն, թէ կրթական ու համալսարանական նպաստ:

Յաճախ ըսած ենք, որ կուսակցականներ կրնան սխալիլ, նոյնիսկ՝ գայթակղիլ ու սայթաքիլ: Դաշնակցութիւնը սակայն չի սխալիր: Դաշնակցութիւնը այն ծովն է, որուն ալիքները իրմէ դուրս կը շարունակ խճաքարերը: Սխալողները, ովքեր ալ ըլլան, պատասխանատու ինչպիսի դիրքեր զբաղեցուցած ըլլան, դուրս կը մնան Դաշնակցութենէն: Սայթաքողները, կազմակերպութեան շարքերէն ներս սպրդած շահադէտ բախտախնդիրները ի վերջոյ կ'արժանանան Դաշնակցութեան ինքնասրբագրող, երկար համբերութիւն ունեցող, միշտ ընկերական տրամադրութիւն ցուցաբերող բարոյական սկզբունքներու հաւատարիմ արդար վճիռին, որ յաճախ նաեւ կ'ըլլայ անխնայ: Դաշնակցութիւնը այն կուսակցութիւնն է, որ միշտ ինքզինքը կը սրբագրէ, ինքզինքը կը բուժէ:

Վատ ժամանակներու մէջ կ'ապրինք աշխարհով մէկ: Յայաստանի իշխանաւորներուն կողմէ Արցախի յանձնումը եւ անհեռանկար ու հայավնաս պարտաւորական բանակցութիւնները հիպոթափութիւն եւ յուսահատութիւն ստեղծեցին համայն հայութեան մօտ:

Սակայն մենք, մեր տեսակը, հայու խիզախ տեսակը պարտութիւնը չի կրնար ընդունիլ ու վճարակամ կերպով կը պայքարի յոյսի ու յաղթանակի համար: Գեորգ Զաւուշէն Լիզպոն, Աբօ Աշճեան թէ Սարգիս Չեչլեան, Ռաֆֆի Պէքաբեան, Յարութ Բանոյեան, Յակոբ Ասթարճեան թէ Մոսիկ Սեքլեմեան օրինակներ են միայն յաղթանակ կերտող խելներու:

Յուսալիլ այս ապագայի կերտման մէջ անտարակոյս իր դերը ունին Յայաստանի կողքին հին ու նոր Սփիւռքը: Յիմնովին սխալ է վերապահութիւններ ստեղծել երկու զանգուածներուն միջեւ կամ իրարու նկատմամբ: Վերջնական համոզում է, որ Յայաստան իւրաքանչիւր հայու հայրենիքն է: Այս մէկը կը մնայ կարգախօս, եթէ անոր չհետեւի Յայաստանի եւ Սփիւռքի միջեւ ճիշդ գործակցութեան ծրագրաւորումը: Ընդունիլ, որ Յայաստանը բոլորին հայրենիքը դարձնելու բնական նպատակը կարիք ունի նման գործակցութեան: Հօգր Սփիւռքը անհրաժեշտ է Յայաստանի համար ու հօգր

Սկզբ՝ էջ 8

Հայաստանը անհրաժեշտ է Սփիւռքի հզորութեան: Այս իմաստով հաւասար պատասխանատուութիւններ գոյութիւն ունին: Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը գործակիցներ են եւ ոչ մէկը ենթակայ է միւսին: Անոնք անքակտելի եռամիասնութիւն են, զոր քանդելու կը ձգտին: Այս եռամիասնութիւնը ենթակայ է ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականին: Հետեւաբար, թելադրողի հեղինակութենէն անդին, ուժի կեդրոններ հաստատելու ձգտումին փոխարէն, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ ներքին հակասութիւններ որոնելու եւ զանոնք շահագործելու միտումներէն վեր, անհրաժեշտ է միասնաբար, գործակցաբար, դերերու ճշգրիտ բաշխումով աշխատանքի լծուիլ այնպիսի պահու մը, երբ ո՛չ Արցախի, ո՛չ շրջանային, ո՛չ միջազգային եւ ոչ ալ գոտ հայկական պայմանները մեզի կու տան ժամանակը եւ քայլերը՝ զբաղելու երկրորդական հաշիւներով եւ ինքնահաստատման արդէն ժամանակավրէպ դարձած մոլուցքներով:

Աշխարհը թաւալուր կ'ուղղուի գաղափարագուրկ ընկերութեան գիրկը: Զաղաքական, տնտեսական, ընկերային եւ նման փոփոխութիւններ աստիճանաբար մարդը կ'ուղղեն վերածուելու աշխարհաքաղաքացիի: Անհատը իր հայրենիքը կը տեսնէ ճամբորդութեան ճամպուկին մէջ, կամ հոն, ուր կրնայ տնտեսական բարգաւաճում ապրիլ: Աշխարհը հայրենիքի վերածելու գաղափարի անգաղափարական ընթացքը կը շարունակէ իր ճամբան:

Ու մենք ալ սկսած ենք վարակուիլ այս դաւադրական մթնոլորտէն: Մարդը թիւ նկատելու, շահու աղբիւր նկատելու, դրամատնային հաշիւ նկատելու, ազգի ու ազգութեան բացարձակ արժէքը ոտնակոխելու թակարդին մէջ իյնալու նախանշաններ արդէն իսկ տեսանելի են: Արդիականութեան, ըստ էութեան պետական շահերու նպաստող, սակայն հանրութեան հաճելի թուող գեղեցիկ սկզբունքներու արտայայտութեան, հաղորդակցութեան արդիական միջոցներու, ընկերային ցանցերու ազատ օգտագործման դրօշակիր դառնալու արագավազ մրցումը վստահաբար կը սազի նիւթապաշտութեամբ առաջնորդուող Արեւմուտքին կամ նմանօրինակ ընկերութիւններու, որոնց ո՛չ ինքնութիւնը վտանգուած է, ո՛չ իրաւունքները ոտնակոխուած, ո՛չ հայրենիքը գրաւուած եւ ոչ ալ ժողովուրդը՝ տարտղնուած: Նման ժողովուրդներ ապահոված կրնան ըլլալ իրենց յաւերժութիւնը եւ իրենց երկիրը: Իսկ մենք՝ հայութիւնն ու Հայաստանը, ինչո՞ւ պարտաւորուած ենք հետեւել, արտօնեցե՛ք այս բառին, այս «մտային»:

Այո՛, մենք անհրաժեշտութիւնը ունինք քայլ պահելու համաշխարհային զարգացումին հետ: Չենք կրնար կղզիանալ, դռները փակել, չտեսնել ու չլսել: Զայլ պահել, սակայն, չի նշանակեր նմանիլ ուրիշին, կորսնցնել սեփականը, ուրանալ ինքնութիւնը: Այո՛, անհրաժեշտ է կառուցել տիր, մեր տիրը, եւ ոչ ուրիշին կողմէ առաջարկուած, ուրիշին կողմէ կառուցուած, իրեն համար հաճելի, սակայն մեզ քանդող տիր:

Նորը, նոր հայը կառուցենք մեր պայմաններով: Ո՛չ այն հայը, որ հպարտ է օտարին մէջ իր ինքնութեան մոռացումով, սակայն՝ մականունի «եան»-ով: Ո՛չ այն հայը, որ հայկական քաղաքացիութիւն կը ստանայ մետասաներորդ ժամուն իր մեծ հօր հայկական արմատները յիշելով, որպէսզի կարենայ դիւրութեամբ ստանալ եւրոպական կամ ամերիկեան այցեգիր: Ո՛չ այն հայը, որ Հայաստանը կը տեսնէ միայն առեւտրի կեդրոն, շահի աղբիւր ու կը խռովի անկէ, երբ իր առեւտրական գործառնութիւնը իր ակնկալած շահը չ'ապահովէր:

Մենք չենք ուզեր տեսնել այն նոր հայը, որ այլեւս հայ դպրոցը, հայ միութիւնը, հայ մշակոյթը անհրաժեշտ չի տեսնէր հայութեան ինքնութեան պահպանման մէջ, այլ բաւարարուած կ'ըլլայ տարեդարձ տարեդարձ Յեղասպանութեան յուշարձան այցելելով կամ մահուան մահիճին իր վերջին օրերուն նուիրատուութիւն կատարելով օտար հաստատութեան մը, յաւերժացնելու համար իր կամովին վաղուց մոռցած հայ անունը:

Մենք կարիքը չունինք այն նոր հայուն, որ թուրքիոյ հետ հաշտութեան կը ձգտի թեթեւցնելու համար Հայաստանի տնտեսական բեռը կամ կը բաւարարուի թուրքիայէն ձեռք բերելով իր սեփական կալուածներու նիւթական հատուցումը: Ո՛չ ալ այն նոր տիպարին, որ թուրքիոյ հետ իր գործառնութեամբ կամ կատարած զբօսաշրջական պտոյտներով կը պատրուակէ, որ կը նպաստէ հայութեան դատին, Յեղասպանութեան ճանաչման եւ գրաւեալ հողերու վերադարձին:

Այո՛, մենք նոր հայ տիպար պարտինք կերտել, որուն ջիղերն ու զգայարանները ըլլան հայատրոփ, որ իր հայութեամբ ու ինքնութեան հպարտութեամբ յարգանք պարտադրէ օտարին: Հայ նոր տիպար, որ չամբնայ իր ազգանունէն կամ հայութեան թերութիւններէն: Տիպար, որ ընդունի տիրը, զայն հայկականացնէ, անով բարելաւէ, բարեկարգէ հայութիւնն ու Հայաստանը ու պարզապէս օտարին նուագած ջութակին մէկ լարը չըլլայ ու այդ ջութակը նուագելով՝ մնայ օտարին ծառայութեան մէջ:

Անցնող տասնամեակը տագնապալի եղաւ Միջին Արեւելքի համար, որուն ժողովուրդին իբրեւ անբաժանելի մասը՝ տառապեցաւ նաեւ հայութիւնը: Իրաքի, Եգիպտոսի, Սուրիոյ եւ գրաւեալ Պաղեստինի մէջ կատարուող արիւնալի դէպքերը վտանգեցին նաեւ հայութիւնը: Ահաբեկչութեան գազանացումը հարուածեց շրջանի ժողովուրդները: Վնասուեցան նաեւ անհատ հայեր եւ հայկական հաստատութիւններ:

Պատերազմը իր անհատութեամբ հարուածեց յատկապէս Սուրիան: Մեծապետական հաշիւներու կրուախնձոր դարձած Սուրիան ենթարկուեցաւ համաշխարհային յարձակումի, ահաբեկչութեան, որուն մէջ գլխաւոր դերակատար եղաւ թուրքիան՝ իբրեւ պետութիւն եւ գլխաւոր հովանաւորող իր վարքագիծին այդքան հարագատ ահաբեկչութեան:

Թուրքիոյ սահմանակից Սուրիոյ հայութիւնը թրջական ուղղակի թէ հովանաւորուած հարուածներով թիրախ դարձաւ Զեսայի, Տեր Չօրի ու Հա-

լեպի մէջ: Ընդհանուր աւերին, աներեւակայելի քանդումին ու ապագայի անորոշութեան մէջ Սուրիոյ մեր քոյրերն ու եղբայրները բռնեցին գաղթի ճամբան: Լիբանանն ու Հայաստանը եղան առաջին հանգրուանները, իսկ ուրիշներ հասան անելի հեռուներ:

Սակայն հայութիւնը կը շարունակէ ապրիլ Սուրիոյ մէջ: Իսկ քաղաքական լուծումը, որուն շատագուրդ եղաւ Դաշնակցութիւնը տագնապի առաջին իսկ օրէն, իր նախանշանները սկսած է տալ, իսկ յայտարարուած Սուրիոյ հայութեան վերականգնումը ընթացքի մէջ է արդէն:

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ, Դաշնակցութեան օրը տարեդարձ չէ: Դաշնակցութեան օրը հայ ժողովուրդի պայքարելու կամքի յիշատակումին օրն է:

Ան հայ ժողովուրդի դատին համար ինկած իւրաքանչիւր հայ մարտիկի օրն է:

Արդար քրտինքով իր օրապահիկը շահող իւրաքանչիւր հայ մշակի, հայ բանուորի, հայ ուսուցիչի օրն է: Շահագործումը մերժող հայ մարդուն, հայ գործատիրոջ, անշահախնդիր հայ պատասխանատու մարդուն օրն է:

Դաշնակցութեան օրը դաշնակցական կուսակցականի օրը չէ միայն, այլ՝ իւրաքանչիւր հայ մարդու, որ իր հայութիւնը, հայկականութեան պահպանումն ու ամրապնդումը կը տեսնէ Դաշնակցութեան մէջ:

Հայ կնոջ օրն է օրը Դաշնակցութեան, որ տակաւին կնոջ իրաւունքներու այսօր ծաւալած պահանջատիրութենէն հարիւր տարի առաջ հայ կինը նկատած էր անխորտակելի սիւն՝ իր կուսակցութեան եւ ժողովուրդին:

Դաշնակցութեան օրը գաղափարական հայ մարդուն օրն է: Այն հայուն, որ կը մերժէ ընկերային անարդարութիւնը, բռնատիրութիւնը, դասակարգային խտրականութիւնը: Օրն է այն հայուն, որ լրջախոհութեամբ ըմբռնած է ազատութեան գաղափարը, ողջմտութեամբ դիտած է ու կը դիտէ իր շուրջը ծաւալած ու ծաւալող ապագայնացնող երեւոյթներն ու սայթաքումները:

Դաշնակցութեան օրը հայ երիտասարդին օրն է: Արիւստաւոր, աշակերտ կամ ուսանող երիտասարդին, որ կը հաւատայ, թէ երիտասարդութիւնը տարիքային սահմանում չունի, այլ պայքարելու կամք է, փոփոխութիւն յառաջացնելու ձգտում, քննարկելու եւ քննադատելու անկողմնակալ հասունութիւն:

Դաշնակցութեան օրը հայ մտաւորականին, ենթարկուածութիւնը մերժող, ազատ մտքին թռիչք տուող, արի ու խրոխտ կեցուածքներու տէր, խօսքը ճակտէն ըսող անվախ ու իր գրիչը վաճառքի չհանող մտաւորականին օրն է:

Դաշնակցութեան օրը հայ ժողովուրդի բովանդակ շահերը պաշտպանող, այդ շահերու ապահովման ի խնդիր տառապող, պայքարող, զոհաբերող հայ մարդուն օրն է:

Ու տակաւին Դաշնակցութեան օրը հայ եկեղեցականին օրն է, օրն է Ամենակալ Աստուծոյ հետ հայերէն խօսող հոգեւորականին, որ իր ժողովուրդին հոգեւոր սնունդ կ'ապահովէ եւ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատքով կը զօրացնէ հայ մարդը:

Դաշնակցութեան օրը օրն է Դաշնակցութեան հիմնադիրներուն, նուիրեալներուն, ֆիտայիներուն, հերոսամարտ կերտողներուն, թրջական թէ ցարական հարուածներու զոհերուն, Հայաստանի Հանրապետութեան կերտիչներուն, համաժողովրդային բանակի զինուորներուն, պղծելիկեան լուծի թէ տարբեր գաղտնի սպասարկութեանց զոհերուն:

Յեղասպանութեան ոճրագործները պատուհասողներուն, Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան ինքնապաշտպանութեան թէ Հայ Դատի պայքարի ճամբուն ինկած նահատակներուն, Հայաստանի անկախութեան համար զոհուած ու Արցախը հայ ու անկախ պահելու համար ազատութեան բազիկին զոհուած աննման տղոց օրն է:

Հայկական արժէքներուն հաւատացող իւրաքանչիւր հայու օրն է Դաշնակցութեան օրը:

ՀՅ Դաշնակցութեան 132-ամեակը պարտաւոր ենք վերածելու անկիւնադարձի:

Հօր Դաշնակցութիւնը վստահաբար կը հզօրացնէ Հայաստանն ու Արցախը:

Ու այդ հզօրութեան համար, Հայաստանի եւ հայութեան հզօրութեան համար բոլորս հրաւիրուած ենք հաւաքական գործի:

Մեր պահեստի զինամթերքը, դո՛ւք էք, սիրելի՛ համակիր զանգուածներ, այս սրահին մէջ գտնուող բազմահարիւր հաւատացեալներ, ձեզմով կը զօրանանք մենք:

Պահանջեցե՛ք մեզմէ ու խնայող մի՛ ըլլաք ձեր պահանջին մէջ:

Չօրակից մնացե՛ք մեզի ինչպէս միշտ, նաեւ՝ վաղը, եւ ձեր զօրակցութիւնը կը վերադարձուի ձեզի, հայութեան ու Հայաստանի, բազմապատիկ ձեւով:

Ո՛չ մէկ հարուած, ո՛չ մէկ վտանգ մեզ կը վիատեցնէ: Մենք յուսահատիլ չենք գիտցած:

Իսկ անոնք, որոնք կ'աղօթեն Դաշնակցութեան քանդումին համար կ'ըսենք՝

Դաշնակցութիւնը ծնած է ապրելու համար:

Ու այնքան ատեն որ կ'ապրի հայ ժողովուրդը, պիտի ապրի Դաշնակցութիւնը:

Դաշնակցութիւնը ձերն է: Ամուր կը մնանք ձեզի համար:

Ամուր կը մնանք գալիք սերունդներուն համար:

Ամուր կը մնանք Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի համար:

Միասնաբար պետք է ապրիլ Դաշնակցութիւնը: Մենք կը խոստանանք մնալ արի եւ խիզախ:

Յուսահատութիւնը տեղ չունի մեր հոգիներուն մէջ: Մենք հաւաքաբար պիտի յարթենք: Դաշնակցութեան գիտցած ոճով, ոչ թէ «յարթելու ենք»-ի խաբկանքով:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Գործնական ամաչարկներ պիտի ունենաք եւ մասնագիտական յաջողութիւններու հասնիք այս շաբաթ: Ձեր յարաբերութիւնները կայուն են մարդոց հետ եւ նոյնիսկ հաշտութիւն մը կը նախատեսուի:
- 

Ցուլ
Ձեր դիրագրագիւմ նկարագիրը երբեք հաճելի չէ: Ձեր տեսակետը պիտի պաշտպանէք եւ որոշ ծրագիրներ յետաձգէք: Որեւէ մէկէն օգնութիւն մի՛ ակնկալէք:
- 

Երկուորեակ
Յամառօրէն կը շարունակէք պնդել ձեր տեսակետը: Կարճ հանգիստի մը կարիքը ունիք վերանորոգուելու համար: Հետաքրքրական գործերով զբաղեցէ՛ք եւ պիտի հանդարտիք:
- 

Խեցգետին
Դատարկ վիճաբանութիւններով ժամանակ եւ ուժ մի՛ վատնէք: Փորձեցէ՛ք յառաջիկայ օրերուն անախորժ դէպքերուն վերջ տալ եւ բարեկամաբար վարուիլ բոլորին հետ:
- 

Առիւծ
Շատ աշխատեցէ՛ք, հաւատալով որ ձեր ջանքերը ապարդիւն պիտի չըլլան: Անձնական եւ գործնական բնոյթ ունեցող հետաքրքիր ամաչարկներ պիտի ստանաք: Մի՛ մերժէք զանոնք:
- 

Կոյս
Լուրջ խնդիրներ կը դիմագրաւէք: Անկեղծութեամբ խոստովանեցէ՛ք զանոնք ձեր սիրելիներուն: Թիրիմացութեան ամիթ մի՛ տաք:
- 

Կշիռք
Ամեն բան սկիզբէն կը ծրագրէք: Նիւթական գնահատանքի մը պիտի արժանանաք, որ պիտի օգնէ ձեր ստեղծագործական աշխատանքները յաջողութեամբ կատարելու:
- 

Կարիճ
Ձեր հակամակորդներուն հետ պիտի պայքարիք եւ յաղթէք: Լուրջ տարածայնութիւններ պիտի ըլլան ձեր մասին: Համբերատարութեամբ վարուեցէ՛ք եւ պիտի յաջողիք:
- 

Աղեղնաւոր
Լաւատեսութիւնն ու կենսասիրութիւնը երբեք չեն լքեր ձեզ: Ձեր սիրելիներուն հետ լաւ ժամանակ պիտի անցընէք այս շաբաթ: Նոր ծանօթութիւններ ալ պիտի հաստատէք:
- 

Այծեղջիւր
Այս շաբաթ օգնութիւն պիտի ստանաք այն մարդոցմէ, որոնք յաճախ քըննադատած են ձեզի: Չգոյշ եւ ուշադիր եղէ՛ք ձեր յարաբերութիւններուն մէջ:
- 

Ջրհոս
Նախկին սխալներէն պիտի խուսափիք եւ վերադառնաք ձեր անձնական հարցերուն լուծման: Փափաքելի է նուազեցնել յոգնեցուցիչ գործերը:
- 

Ձուկ
Յետաձգեցէ՛ք կարգ մը մարդոց հետ ձեր հանդիպումները, որոնք խոչընդոտներու կ'ամաչանորդեն ձեզ: Փորձեցէ՛ք լաւ տրամադրութիւն պահպանել եւ ժպտիլ:



ԻՆՉՊԷՄ ԶԱՐԴԱՐԵԼ ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ 2023-Ի ԱՄԱՆՈՐԻՆ



Ինչպէս զարդարել մեր բնակարանը, ինչպիսի հագուստ ընտրել Ամանորի հետաքրքրական երեկոյին համար. այս ամէնը բնականաբար մեր հոգին վառ զգացումներով կը հարստացնէ:

2023-ի Տօնական Սեղանի Չարդարանքն Ու Գոյները

31 Դեկտեմբերի գիշերը սեղանը թելադրելի է յարդարել գունաւոր պնակներով, իսկ մասնագետներ կ'ամաչարկեն երկու հիմնական ուղղութիւններ.

-Առաջինը՝ դասական ոսկեգոյն-կարմիր գոյներու համակարգն է՝ կանաչի լրացումներով:

-Երկրորդ ծանօթ տարբերակը՝ կապոյտի, բաց կապոյտի եւ սպիտակի համադրութիւնն է, անշուշտ արծաթագոյն փայլքի երանգներով՝ առ ի յիշեցում Նոր Տարուան գիշերուան տօնական մթնոլորտին:

Այդ կապոյտն ու բաց կապոյտը կը համապատասխանեն ջրային Նապաստակի գոյնին, որ այս տարուան խորհրդանիշն է:

Ինչպէ՛ս Յիշատակել Նոր Տարին

Ամանորին պէտք է նախապատրաստուիլ լաւ տրամադրութեամբ, շրջանցել դժուարութիւններն ու լաւատեսութեամբ լեցուիլ, ամենակարեւորը համախմբուիլ հարազատներու եւ սիրելիներու հետ: Ամանորին հարկ է ըլլալ ներողամիտ, մոռնալ վեճերն ու քիսախնդիր չըլլալ:

Ձեր ընտանիքի անդամներուն հետ միասին կազմակերպեցէ՛ք տօնի նախապատրաստական աշխատանքները. սա կը նպաստէ ընտանիքի անդամներուն մերձեցման եւ ուրախ մթնոլորտի նախապատրաստման: Մեծ գումար մխիւելը պայման չէ գեղեցկութիւն եւ շքեղութիւն բերելու ձեր տան: Օգտագործեցէ՛ք պարզ գարդեր, սեղանը յարդարեցէ՛ք ձեռնային աշխատանքով, ձեր հագուստները թող ըլլան պարզ ու գեղեցիկ: Ձեր ժպիտն ու սերը գեղեցկագոյն ձեւով պիտի զարդարեն ձեր բնակարանը:

2023-ը, ըստ աստղագուշակներու, ակելի հանգիստ ու երջանկաբեր տարի մը ըլլալ կը թուի:

Ինչ Կը Բերէ Սեւ ջրային Նապաստակի Տարին

Նապաստակի տարին չորրորդն է չինական կենդանակերպի 12-ամեայ շրջագիծին մէջ եւ կը համարուի ամենաերջանիկը արեւելեան օրացոյցին մէջ:



Ճագարը յաջողութիւն կը բերէ՝ նաեւ բնակարանային հարցերու լուծման: Տարին բարենպաստ է ճամբորդութիւններու համար: Ճագարը շարժուն կենդանի է, ուստի աշխատանքի Նոր ամիթներն ու կարելիութիւններ կրնայ ստեղծուիլ աշխատասեր ու հնարամիտ մարդոց համար:

Եղէ՛ք լաւատես, մաքրեցէ՛ք ձեր հոգին, պայծառ դարձուցէ՛ք ձեր միտքը ու պիտի տեսնէք, թէ տարին ինչպէ՛ս պիտի ժպտի ձեզի:

Բանաստեղծական անկիւն

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐ



Չաիրան

Ամեն ինչ ծայրէն վերսկսելու, Ի վերջոյ նորէն այդպէս ըլլալու-Տօնն է այս գիշեր.....

Լոյսեր վառեցէք - եթէ չի բաւեր Ձեզ տաքցնելու ձեր լոյսը ներքին-Տօնն է այս գիշեր...

Պահ մը ամեն ինչ վերջացնելու Ամեն ինչ ծայրէն վերսկսելու-Տօնն է այս գիշեր...

Յոյսեր վառեցէք - եթէ չեն բաւեր Ձեզ տաքցնելու ձեր յոյսերը հին-Տօնն է այս գիշեր...

Երգել փորձեցէք - եթէ չէք մոռցեր Խանդոտ երգերը ձեր պարմանութեան-Տօնն է այս գիշեր...

Չուր տեղ վատնուած օրերն յիշելու-Գոյութեան տխուր հաշուեկշիռին Տօնն է այս գիշեր...

Լոյսեր ու յոյսեր վառեցէք գոյն գոյն, Երգեր երգեցէք հինէն ու նորէն-Տօնն է այս գիշեր...

Գոյատեւելու՛ տօնն է այս գիշեր...



Ռաֆֆի Սիլահեան

ԱՐԺԱՆԹԻՆ ԶՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԿԸ ԽԱՂԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓՈՎԿԻՉԻՆ

Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչի երկրորդ խաղին, Ամերիկայի գալաթակիր Արժանթինի հաւաքականը մրցակից ունեցաւ Զոլանտան: Զիմնական ժամանակը ավարտին հասաւ 2 - 2 հաւասարութեամբ, եւ խումբերը դարձեալ դիմեցին 11 մեթրի հարուածներուն:



Սին ֆրանսայի Փարիզ Սան Ժերմանի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսսի փոխանցումէն օգտուելով խաղի կոլերուն բացումը կատարեց Նաուել Մոլինան: 73-րդ վայրկեանին Լիոնել Մեսսին տուգանային հարուածով կրկնապատկեց Արժանթինի արդիւնքը: Մեսսին աշխարհի առաջնութիւններուն նշանակեց իր 10-րդ կոլը

եւ հաւասարեցաւ Պաթիթաթային: Զոլանտացիները տարբերութիւնը կըրճատեցին 83-րդ վայրկեանին: Աւելցուած 11-րդ վայրկեանին էլ Վոգոժուտը տուգանայինի խաղարկումէն օգտուելով նշանակեց հաւասարութեան կոլը, եւ խումբերը դիմեցին յաւելեալ ժամանակի խաղարկութեան որմէ ետք դիմեցին հեռաւոր հարուածներուն եւ հանդիպումը իր ավարտին հասաւ ի նպաստ Արժանթինին 4 - 3 արդիւնքով:

ՓՈՐԹՈՒԿԱԼ ԴՈՒՐՍ ՄԱՍՑ ՄԱՐԶԻՉԻՆ ՍԻԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչի երրորդ խաղին, Մարոք 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Փորթուկալը: Զանդիպումի տեսողութեան Մարոք միայն երեք առիթներով կըրցաւ հասնիլ Փորթուկալի դարպասին, որոնցմէ մէկէն օգտուելով նշանակեց իր յաղթանակի միակ կոլը, իսկ մնացեալ ժամանակը վստահեցաւ պաշտպանողական խաղարկութեան:



Փորթուկալի հաւաքականի աւագ Զրիստիանո Բոնաւտո երկրորդ անգամ ըլլալով մնաց պահեստայիններու կազմին մէջ եւ մուտք գործեց դաշտ երկրորդ կիսախաղին: Նշեք թէ մրցումէն ետք, փորթուկալցիները ձախողութեան պատճառով նկատեցին հաւաքականին մարզիչը, եւ պահանջեցին անոր հեռացումը:

ԱՆԳԼԻԱ ԴԱՐՁԱՎ 1 / 4 ՓՈՒԼԻ ՎԵՐՋԻՆ ԶՈՐԸ

Աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչի վերջին գոլը դարձաւ Անգլիան՝ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնուելով աշխարհի ախոյեան Ֆրանսային: 17-րդ վայրկեանին Օրելիէն Զուամենին հեռաւոր հարուածով մը ցնցեց Անգլիոյ դարպասը: 54-րդ վայրկեանին Թոթենհամի խաղացող Զերի Զէյնը տուգանային հարուածով նշանակեց հաւասարութեան կոլը, որմէ 13 վայրկեան ետք ֆրանսացիները անգամ մը եւս կրցան տիրապետել արդիւնքին՝ շնորհիւ Օլիվեր Ժիրոլին: 84-րդ վայրկեանին VAR-ին հիմնուելով դարձեալ տուգանային հարուած մը տրամադրուեցաւ Անգլիոյ կազմին սակայն Զէյն ձախողեցաւ իրագործել տոյն հարուածը եւ յաղթանակը մնաց Ֆրանսային:



կայն Զէյն ձախողեցաւ իրագործել տոյն հարուածը եւ յաղթանակը մնաց Ֆրանսային:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 372)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Չորիզոնական

- Աղօթամատեան մը: Ձիւն ձայն:
- «Ինք» անձնական դերանունին տրական հոլովումը: Զակառակ՝ առաջին կիկը: Զակառակ՝ պատ:
- Գոյութիւն ունին: Որոշուած գին:
- Ախտագետ: Զակառակ՝ անձնական դերանուն:
- Միայն: Թեթեւ քուն:
- Դուռի ճարտարապետական արտաքին շրջանակ: Մատաղ:
- Մէկը: Սամուէլ մարգարէի մայրը: Շարժուն մեքենայի ուղղութիւն դորշմող գործիք:
- 7400: Սուրիոյ քաղաքներէն: Ստամբուլէն դուրս արտաքսուած նիւթ:
- Զայոց ամիսներու 16-րդ օրը: Կեցի՛ր:
- Թանկագին քար մը: Զակառակ՝ տառի մը անունը:
- Տեգ: Զակառակ՝ կտրուած ու մաքրուած ոչխարի բուրդ: Շաղկապ:
- Ճաղատ: Մագերու երկայն հիւսք:

Ուղղահայեաց

- 1897-ին Խանասորի արշաւանքին մասնակցած յիսապետ:
- Արական անուն: Պատ շինող արհեստաւոր:
- Ատուածային: Սիգանք:
- Էական բայ: Երեսը ծածկող արուեստական դէմք:
- Զայ թագաւոր: Սիամանթոյի ծննդավայրը:
- Ահաւափկ: Պէս:
- Զակառակ՝ 202: Տառի մը հարեւանները: Զակառակ՝ այժմ:
- Կրօնաւորի սրածայր գլխածածկ: Շինուածք: 2060:
- Պչրանք: Գուսան մը:
- Ստացական դերանուն: Ռուբէն Չարդարեանի արձակ բանաստեղծութիւններէն:
- Կարճ սուր՝ թուր: Գլխի մագ: Չայնաւորներ:
- Չօրախումբ (հազարական): Պրկում:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 371)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	հ	ե	ն	մ	ե	դ	ր	ե	ա	ն	
2	ե	ր	ե	ա	մ	2	ե	դ	ա	կ	ի	
3	ր		2	կ	ա	հ		կ	ե	ա	լ	
4	ա	ս	տ		ն	ե	տ	մ		տ	ա	
5	մ	ի	ա	պ	ա	դ	ա	դ		ի		
6	ա	լ		ս	ո	դ	ո	ս	կ	ի	լ	
7	մ	ի	ք	ե	լ	դ				ի		
8	լ	ա		ն	մ	բ	ա	ծ	ի	գ		
9	ն	ա	կ			ի	մ	բ	ե	լ		
10	ա	թ	ե	ն	ք	ե	ր		հ	ա		
11	ն	օ			ի	ն	տ	ա	ե	ր		
12	ի			ո	լ	2	ք		ն	ա	ն	ե

ԼՈՒԹՈՒՄ

Երկուշաբթի
19/12



8° 16°

Երեքշաբթի
20/12



5° 15°

Չորեքշաբթի
21/12



7° 13°

Հինգշաբթի
22/12



6° 11°

Ուրբաթ
23/12



6° 13°

Շաբաթ
24/12



7° 14°

Կիրակի
25/12



8° 11°

ՀԱՐԻԻՐԱԽՈՐ...

Սկիզբ՝ էջ 1

յորդիներու ընտանեկան պարագաներ եւ Գամիշլիէն, Քեսապէն, Լաթաքիայէն, Յասիէն ու Դամասկոսէն ժամանած Դաշնակցութեան հաւատաւոր ազգայիններ:

Ներկաները դիմաւորուեցան ԲՄԸՄ-ի փողերախումբին ազգային երգերով:



Արաբերէն բացման խօսքով քրիստ ֓այասեան շէշտեց. «Այսօր կ'ոգեկոչենք յիշատակը այն հերոսներուն, մտաւորականներուն եւ ֆիտայիներուն, որոնք պայքարեցան յանուն հայրենիքի ազատութեան: Ուստի կը վերանորոգենք մեր ուխտը շարունակելու պայքարը՝ յանուն մեր հայրենիքի, մեր ինքնութեան ու մշակոյթի պահպանման»:

Մարմանը Աշոտեան հայերէն բացման խօսքով անդրադարձաւ ԶՅԴ-ի գործունէութեան յայտնելով որ. «Ինչպէս միշտ, այսօր եւս, ժողովուրդին ծոցէն ծնած այս կազմակերպութեան դէմ կը ծառանան մահու կենաց խնդիրներ, նորօրեայ մարտահրաւերներ: Ի հեճուկս այս բոլորին, սակայն, Դաշնակցութիւնը, անկոտորում կամքով կը շարունակէ վառ պահել ժողովուրդին ազգային միտքն ու քաղաքական կամքը: Այս իսկ նպատակով ան գործեց ոչ միայն Զայաստանի, այլեւ՝ Արցախի եւ սփիւռքեան այլազան շրջաններուն մէջ ու այս ծիրէն ներս արձանայարեց բացայայտ ու անժխտելի նուաճումներ: Արցախի լինելութեան գոհաստեղանին կուսակցութիւնը ընծայաբերեց իրոյ մը նահատակներ, որոնք աշխարհի ուշադրութիւնը հրաւիրեցին Զայ Դատի արդարացիութեան ու տապալեցին հայ ժողովուրդի իրաւունքներուն դէմ ծառայած լռութեան պատը»:

Հանդիսավար Վիգէն Զաղլասեան հրաւիրեց Զամազգայինի «Չուարթոն» երգչախումբի ութեակը, գեղ. դեկավարութեամբ Գայիանէ Սիմոնեան-Տերեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Լիզա Սեդրաբեկեան-Արմենեանի: Ութեակը շինջ ու ներդաշնակ երգեցողութեամբ յաջորդաբար ներկայացուց «Չարթի, Որդեակ», «Արցախ», «Քեզ Դաշնակցութիւն», «Ելի՛ր ի Չէն», «Տեսէ՛ք Աղաւնին», «Է Զէ՛յ Ոտքի, Զայ՛ ժողովուրդ» երգերը:

Զայ բանաստեղծներու ստեղծագործութիւնները, բնականաբար, իրենց պատգամը պիտի բերէին սոսկակատարութեան: Արդ, Սեւակ Սիւլախեան ասմունքեց համադրում մը Դանիել Վարուժանի, Մուշեղ Իշխանի եւ Վահագն Դաւթեանի՝ «Ձօն», «Յողը Որբացած» եւ «Զայ-

րենիք» բանաստեղծութիւններէն: Տօնակատարութեան բանախօսն էր Լիբանանի խորհրդարանի անդամ, Լիբանանի ԶՅԴ Կ.Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

Ան ողջունեց լիբանանահայութեան ճակատագրակից ու դիմացկուն հալէպահայութիւնը, ապա Սուրիական Արաբական Զանրապետութեան նախագահ տորթ. Պաշ-

շար ալ-Ասատը, որ աննկուն կամքով դիմադրեց Սուրիոյ դէմ շղթայազերծուած համաշխարհային պատերազմին. նախագահ, որ մեծ բարեկամ է հայութեան ու գուրգուրոտ՝ սուրիահայութեան նկատմամբ:



Ապա անդրադառնալով Դաշնակցութեան 132-ամեայ ուղիին ու գանազան դժուարութիւններով մեկտեղ գոյատեւումին շէշտեց.


«Փնտռեցէ՛ք ԶՅ Դաշնակցութեան նմանող կուսակցութիւն մը, որ ներկայութիւն է աշխարհի տարածքին 34 երկիրներու, հարիւրաւոր քաղաքներու եւ գիւղերու մէջ: Փնտռեցէ՛ք նման կուսակցութիւն, որ հայրենասիրտ եղած է, բայց հայրենիքով ապրած, պետականօրէն իր գործունէութիւնը արգիլուած է, բայց արգելքները քանդելով ան շարունակած է ապրիլ: Փնտռեցէ՛ք կուսակցութիւն մը, որ հիմնուած է օսմանեան եւ ցարական կայսրութեանց օրերուն, իր ժողովուրդին հետ ապրած է Յեղասպանութիւն, անկախութիւն հռչակած է հայրենիքի մէջ՝ անկախութեան ձեռքբերման պատերազմով, հեռացած ու հեռացուած է հայրենիքէն, ապրած է համաշխարհային երկու պատերազմ, քաղաքական տարապայման միջավայրերու մէջ մասնակցած է հայութեան շահերուն պաշտպանութեան պայքարին՝ Սուրիոյ, Լիբանանի մէջ թէ՛ այլուր, դարձեալ հալածանքներու ենթարկուած է ու հայութեան շահին համար նահատակներ է տուած: «Յոյց տուէ՛ք կուսակցութիւն մը, որուն ակումբները կոչուած են ժողովրդային տուններ, որուն ակումբները գրասենեակներ չեն, այլ պատանիին, երիտասարդին, կնոջ, ուսանողին եւ արիւստաւորին, ջքաւորին ու հարուստին, երեց ու միջին սերունդին, հայուն կողքին յաճախ նաեւ օտարին դիմաց

միշտ բաց եղած են ու մեղուարոյն՝ աշխատանքի»:

«... Փնտռեցէ՛ք, շատ փնտռեցէ՛ք ու վստահ եղէ՛ք, որ պիտի չգտնէք: Սա ո՛չ կուսակցամոլութիւնն է, ոչ ալ մեծամտութիւն, այլ՝ փաստ ու աղաղակող իրականութիւն»:

Բանախօսը դիտել տուաւ, որ Դաշնակցութեան 132-ամեայ սկզբին հիմքը կը կազմեն հայութիւնն ու անոր դատին ծառայելու գոյութենական հաւատքն ու գործը: Ապա նշեց, որ վատ ժամանակներու մէջ կ'ապրինք աշխարհով մէկ, Զայաստանի իշխանութիւններուն կողմէ Արցախի յանձնումը եւ անհեռանկարու հայապատկարտողական բանակցութիւնները հիասթափութիւնն են յուսահատութիւն ստեղծեցին համայն հայութեան մօտ: Սակայն ԶՅԴ վճռակամ կերպով կը պայքարի յոյս ու յաղթանակի համար, այնպէս ինչպէս պայքարած է տարբեր ժամանակներու ընթացքին իր մարտիկներով՝ Գեորգ Զաւուշէն Լիզայն, Արօ Աշտեան թէ՛ Սարգիս Չէլթեան, Ռաֆֆի Պաշտեան, Յարութ Բանոյեան, Յակոբ Ասթարճեան եւ Մոսիկ Սեքլեմեան. օրինակներ միայն յաղթանակ կերտող խենթերու:

Ապա յայտնեց, որ յուսալի ապագայի կերտման մէջ անտարակոյս իր դերը ունի Զայաստանի կողքին Սփիւռքը: Հիմնովին սխալ է վերապահութիւններ ստեղծել երկու գանգուածներուն միջեւ կամ իրարու նկատմամբ: Զայաստանը իւրաքանչիւր հայու հայրենիքն է, սակայն



այս մէկը կը մնայ կարգախօս, եթէ անոր չհետեւի Զայաստանի եւ Սփիւռքի միջեւ ճիշդ գործակցութեան ծրագրաւորում: Հօր Սփիւռքը անհրաժեշտ է Զայաստանի համար, իսկ հօր Զայաստանը անհրաժեշտ է Սփիւռքի հօգօրութեան: Այս իմաստով հաւասար պատասխանատուութիւններ գոյութիւն ունին: Զայաստանը, Արցախն ու Սփիւռքը գործակիցներ են եւ ոչ մէկը ենթակայ է միւսին:

Բագրատունի յայտնեց նաեւ, որ աշխարհը կ'ուղղուի գաղափարագուրկ ընկերութեան գիրկը: Զաղաքական, տնտեսական, ընկերային եւ նման փոփոխութիւններ աստիճանաբար մարդը կ'ուղղեն վերածուելու աշխարհաքաղաքացիի, իսկ մենք անհրաժեշտութիւնը ունինք քայլ պահելու համաշխարհային գարգացման հետ: Չենք կրնար կղզիանալ, դռները փակել, չտեսնել ու չլսել: Զայլ պահել, սակայն, չի նշանակեր նմանիլ ուրիշին, կրքունցել սեփական, ուրանալ ինքնութիւնը: Անհրաժեշտ է կառուցել նորը, նոր հայր՝ մեր պայմաններով, ոչ թէ ուրիշին կողմէ առաջարկուած, ուրիշին հա-

մար հաճելի ու մեզ քանդող հայրը:

Անդրադառնալով Միջին Արեւելքի տագնապալի շրջանին եւս, Բագրատունի մատնանշեց Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի, Իրաքի, Եգիպտոսի մէջ կատարուած արիւնալի դէպքերը, որոնք վտանգեցին նաեւ տեղւոյն հայութիւնը: Ան լուսարձակի տակ առաւ Թուրքիոյ աներիչ դերը, յատկապէս Սուրիոյ դէպքերուն մէջ, եւ նկատել տուաւ, որ Սուրիոյ հայութիւնը կը շարունակէ ապրիլ, գոյատեւել, վերականգնումի ձեռնարկել՝ հաւատալով տագնապի քաղաքական լուծումին, որուն ջատագովն էր Դաշնակցութիւնը:

Եզրափակելով Յակոբ Բագրատունի շէշտեց.

«Մենք կը խոստանանք մնալ արի ու խիզախ: Յուսահատութիւնը տեղ չունի մեր հոգիներուն մէջ: Մենք հաւաքաբար պիտի յաղթենք Դաշնակցութեան իմացած ոճով, ոչ թէ «Յաղթելու Ենք»-ի խաբկանքով»:

Այնուհետեւ գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ:

Ջութակահար Տեսիլ Սարեան նուագեց Արամ Արամեանի յիշատակին նուիրուած «Բանտիս Դռնեք» երաժշտութիւնը:

Ընթերցուեցան այս առիթով հայկական կազմակերպութիւններու շնորհաւորագրերը, որոնք լոյս պիտի տեսնեն «Գանձասար»-ի մէջ:

Համագագայինի «Չուարթոն» երգչախումբի ութեակը ժողովուրդին վերագարթնումի կոչ ուղղեց «Սարդարապատ» երգով:

Հանդիսութեան ավարտին ներկաներուն իր սրտին խօսքը ուղղեց Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տեր Մակար եպս. Ազգարեան: Սրբազան Զայոց անդրադառնալով Դաշնակցութեան ծառայութեան ըսաւ. «Դաշնակցութիւնը երբ կարիքը եղաւ ծառայեց իր բահով, երբ կարիքը եղաւ ծառայեց իր գրիչով, երբ կարիքը եղաւ ծառայեց իր սուրով, իսկ երբ հարկ եղաւ թափեց իր արիւնը, որովհետեւ հաւատաց հայ ժողովուրդի ազատութեան ու անկախ ապրելու իրաւունքին...»:

Սրբազանը պարզեց, որ ծառայութիւն եզրոյթին արմատը ծառ բառն է, իսկ ծառը ունի արմատներ, պաշտպանի դեր, ծառին բարիքներն կ'օգտուի իր շրջապատը. այսպէս ալ եղաւ Դաշնակցութիւնը, որ ծնաւ ժողովուրդի ծոցէն ամուր ար-



մատներ նետեց անոր մէջ ու 132 տարի գործեց ի խնդիր հայ ազգին ու անոր դատին ծառայութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ Սրբազան Զօր «Պահպանիչ» արօթքով եւ «Մշակ, Բանուոր» քայլերգով:

Աւելցնենք, որ հանդիսութիւնը ուղիղ սփռումով ներկայացուց «Ռատիօ Երազ»-ը: